

«ՅՈՒՆԻՏ (ԼԱՅԹ)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Յունիտ (լայթ)» ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

«ՅՈՒՆԻՏ (լայթ)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Յունիտ (լայթ)» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է առանց գունավորման մինչև բաց դեղնավուն և օժանելիքի հոտով թափանցիկ հեղուկ: Որպես ազդող նյութ պարունակում է ՉԱՄ (չորրորդային ամոնիումային միացություններ) խառնուրդ (ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ, N,N-դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ, N,N-դիօկտիլդիմեթիլամոնիումի քլորիդ (ԴՎ)՝ 12% գումարային: Բացի այդ, միջոցի բաղադրության մեջ մտնում են համակցություն առաջացնող հավելումներ, ոչ իոնաձին մակերեսային ակտիվ նյութերի (այսուհետ՝ ՄԱՆ) համակցություն, բուրանյութ, ջուր: Միջոցի pH – $8,0 \pm 1,0$ է:

2. Միջոցը թողարկվում է պոլիմերային ֆլակոններով՝ 100, 200, 500, 1000 սմ³ ամուր փակվող փականներով, 5, 10, 20, 40 դմ³ –անոց բաքերով, 50, 100, 200 դմ³ տարողություններով պոլիմերային տակառներով, 1 մլ-ից մինչև 50 մլ քանակությամբ 1 սաշե-ծրարի մեջ, հերմետիկ փաթեթավորումով:

3. Միջոցի պիտանելիության ժամկետը 5 տարի է՝ գործարանային փաթեթավորման չբացման (այդ թվում նաև բացման) դեպքում: Միջոցի աշխատանքային լուծույթների պիտանելիության ժամկետը 30 օր է՝ դրանց փակ, ապակե, պլաստմասե և արծնապատ (առանց էմալի վնասման) տարողությամբ՝ սենյակային ջերմաստիճանի պայմաններում, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված վայրերում: Աշխատանքային լուծույթները կարող են օգտագործվել բազմակի՝ համաձայն մասնագիտական ցուցումների: Միջոցը պահպանում է բոլոր հատկությունները սառեցման, ապա հալեցման դեպքում: Միջոցի

աշխատանքային լուծույթները սույն հրահանգի ցուցումներին համապատասխան կիրառվելու դեպքում, օժտված են հոտազերծիչ, քիչ փրփուր առաջացնելով լվացող հատկությամբ, չունեն կոռոզիոն ազդեցություն, չեն վնասում մետաղական կամ այլ կառուցվածքային նյութերից բժշկական գործիքները: Միջոցն անհամատեղելի է օճառների, լվացող փոշիների և անիոնային մակերեսային ակտիվ նյութերի հետ:

4. Միջոցի կենսաբանական ակտիվությունը՝ միջոցն օժտված է մանրէասպան հատկությամբ (գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ), այդ թվում ներհիվանդանոցային վարակների (այսուհետ՝ ՆՎՀ), տուբերկուլոզի հարուցչի նկատմամբ, (թեսթավորված է *Mycobacterium terrae* վրա), ունի հակավիրուսային (մարդու համար հայտնի բոլոր տեսակի հայտնի վիրուս-ախտածինների նկատմամբ, այդ թվում ընդերային և արտաընդերային հեպատիտների հարուցիչների՝ ներառյալ հեպատիտ Ա, Բ և Ց), ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի) ակտիվություն, սնկասպան հատկություն (կանդիդա, դերմատոֆիտիաներ): Բացի այդ միջոցն օժտված է բորբոսի նկատմամբ ակտիվությամբ:

5. Ըստ սուր թունավորության չափանիշների, ԳՕՍՏ 12.1.007-76-ին համապատասխան (DL50 ստամոքս ներմուծման դեպքում), խտանյութի վիճակում գտնվող միջոցը պատկանում է չափավոր վտանգավոր նյութերի 3-րդ դասին, քիչ վտանգավոր նյութերի 4-րդ դասին՝ DL50, մաշկի վրա ներգործությամբ, ներշնչական (ինհալյացիոն) ազդեցության ժամանակ գոլորշիների տեսքով, ըստ ցնդելիության աստիճանի (20°C) միջոցը քիչ վտանգավոր է, արտաընդերային ներմուծման ժամանակ պատկանում է քիչ թունավոր նյութերի 4-րդ դասին (ըստ Կ. Կ. Սիդորովի դասակարգման): Մաշկի անմիջական շփման դեպքում միջոցն ունի չափավոր արտահայտված մաշկային գրգռող ազդեցություն և արտահայտված գրգռող ազդեցություն աչքերի լորձաթաղանթների վրա, օժտված է թույլ սենսիբիլիզացնող հատկությամբ: Միջոցի աշխատանքային լուծույթները միանվագ օգտագործման դեպքում մաշկի վրա չեն առաջացնում տեղային գրգռող ազդեցություն, բազմակի օգտագործման դեպքում առաջացնում են մաշկի չորություն, ոռոգման եղանակով կիրառման դեպքում առաջացնում են շնչառական օրգանների և աչքերի լորձաթաղանթների գրգռում: Սենքերում ցանկացած օբյեկտի մշակում ընկղմման և

թրջման եղանակներով իրականացվում է պացիենտների ներկայությամբ: Աշխատանքային գոտու օդում սահմանային թույլատրելի խտությունը (**ՍՌԽ**) ՉԱՄ՝ 1մգ/մ³, աէրոզոլ՝ վտանգավորության երկրորդ դաս, անհրաժեշտ է մաշկի և աչքերի պաշտպանություն:

6. Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն) (հիվանդանոց, պոլիկլինիկա, վերականգնողական կենտրոն, ցերեկային ստացիոնար, բուժսանմաս և բուժկետ, բուժակային և բուժակ-մանկաբարձական կետ, հեմոդիալիզի բաժանմունք, դիսպանսեր, հոսպիտալ, ատամնաբուժական կաբինետ, ծննդաբերական ստացիոնար, օրգանների փոխպատվաստման կենտրոն, արյան փոխներարկման և շտապօգնության կայան և այլն), կլինիկական, մանրէաբանական, ախտաբանանատոմիական, իմունաբանական, ախտորոշիչ և ախտաճնության 3-4 խմբերի մանրէների հետ աշխատող այլ լաբորատորիաներում, վարակիչ հիվանդությունների օջախներում, սպասարկման ոլորտի օբյեկտներում (հյուրանոց, հանրակացարան, բաղնիք, շոգեբաղնիք (սաունա), լվացքատուն, գեղեցկության սրահ, սոլյարի, պիրսինգի և դաջվածքի սրահներ, ոտնա- և մատնահարդարման սրահներ, կոսմետոլոգիական կաբինետներ, ՍՊԱ սրահներ և այլն), մշակութային և սպորտային կազմակերպություններում, հանրային վայրերում (ներառյալ հանրային զուգարաններ՝ բիոզուգարաններ), սանթոդարաններում, հանրային սննդի կազմակերպություններում (ռեստորան, սրճարան, ճաշարան, բար, բուֆետ, սննդի բլոկ, սննդի նախապատրաստման մաս և այլն), սննդարդյունաբերության և սննդի առևտրի կազմակերպություններում, դեղատներում (ներառյալ դեղատնային կրպակների և դեղերի պատրաստման բաժինների, դեղերի պահեստների), քիմիկա-դեղագործական և օժանելիքակոսմետիկական արտադրության կազմակերպություններում, այլ արտադրական կազմակերպություններում և պահեստներում, այդ թվում ցորենի, սննդամթերքի, հիգիենայի պարագաների պահեստներում, թղթային պահոցներում, սպառողական և արդյունաբերական շուկաներում, մանկական և հանրակրթական կազմակերպություններում (մանկապարտեզներ, դպրոցներ, միջին մասնագիտացված ուսումնական հաստատություններ, ԲՈՒՀ-եր, հատուկ մասնագիտացված ուսումնական

հաստատություններ, երեխաների հատուկ հաստատություններ (մանկատներ, տուն-ինտերնատներ, մանկական առողջարաններ և այլն)), սոցիալական ապահովման հաստատություններում (հոսպիսներ, պալիատիվ խնամքի կենտրոններ, տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատներ և այլն), քրեակատարողական հիմնարկներում, դատա-բժշկական փորձաքննության կազմակերպություններում, դիախերձարաններում, հուղարկավորության արարողությունների կազմակերպման հաստատություններում (դիակիզարաններ, կոլումբարիումներ), ՊՆ, ԱԽՆ, ոստիկանության և այլ գերատեսչություններին պատկանող օբյեկտներում, սանիտարական տրանսպորտի, սննդամթերքի տեղափոխման տրանսպորտի, քաղաքային վերգետնյա և էլեկտրատրանսպորտային, բեռնափոխադրող տրանսպորտի, ավտոտրանսպորտային արտադրություններում, մաքրող կազմակերպությունների կողմից մաքրման վայրերում, մարդկանց զանգվածային կուտակումների վայրերում, ինչպես նաև այլ համաճարակային նշանակություն ունեցող օբյեկտներում, որտեղ պահանջվում է ախտահանման աշխատանքների իրականացում՝ գործող նորմատիվների համապատասխան, ինչպես նաև ազգաբնակչության կողմից՝ կենցաղում օգտագործելու համար:

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ

ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

7. Միջոցի աշխատանքային լուծույթների պատրաստումն իրականացվում է արձնապատ առանց էմալի վնասման, ապակե կամ պլաստմասսե տարաների մեջ, միջոցի խտանյութին խմելու ջրի ավելացմամբ՝ սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված պահանջներին համապատասխան.

Աղյուսակ 1.

Միջոցի աշխատանքային լուծույթների պատրաստման սխեմա

Աշխատանքային լուծույթի խտությունը, %	Միջոցի խտանյութի և ջրի քանակը (մլ), անհրաժեշտ աշխատանքային լուծույթի պատրաստման համար
--------------------------------------	---

		1 լիտր		5 լիտր		10 լիտր	
Ըստ նյութի	Ըստ ազդող նյութի (ՉԱՄ)	միջոց	ջուր	միջոց	ջուր	միջոց	ջուր
0,20	0,024	2,0	998,0	10,0	4990,0	20,0	9980,0
0,25	0,030	2,5	997,5	12,5	4987,5	25,0	9975,0
0,5	0,060	5,0	995,0	25,0	4975,0	50,0	9950,0
1,0	0,120	10,0	990,0	50,0	4950,0	100,0	9900,0
1,5	0,180	15,0	985,0	75,0	4925,0	150,0	9850,0
2,0	0,240	20,0	980,0	100,0	4900,0	200,0	9800,0
3,0	0,360	30,0	970,0	150,0	4850,0	300,0	9700,0
4,0	0,480	40,0	960,0	200,0	4800,0	400,0	9600,0
5,0	0,600	50,0	950,0	250,0	4750,0	500,0	9500,0
6,0	0,720	60,0	940,0	300,0	4700,0	600,0	9400,0
7,0	0,840	70,0	930,0	350,0	4650,0	700,0	9300,0
8,0	0,960	80,0	920,0	400,0	4600,0	800,0	9200,0
10,0	1,200	100,0	900,0	500,0	4500,0	1000,0	9000,0

8. Միջոցի աշխատանքային լուծույթով տարաները ապահովում են կափարիչներով, ունեն հստակ նշումներ միջոցի, դրա խտության, նշանակության, պատրաստման ամսաթվի, պիտանելիության ժամկետի վերաբերյալ:

3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

9. Կիրառման օբյեկտներ: Միջոցի աշխատանքային լուծույթը նախատեսված է ախտահանման և լվացման (այդ թվում դեզադորացման) համար՝ կանխարգելիչ,

ընթացիկ և եզրափակիչ ախտահանման, ինչպես նաև հիմնական մաքրման նպատակով.

- 1) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, ինչպես նաև այլ կազմակերպությունների սենքերի արտաքին մակերեսներ (հատակ, պատեր, առաստաղ) և կահավորանք (այդ թվում կոշտ և փափուկ կահույք),
- 2) բժշկական և այլ սարքավորումներ, սարքեր, բարդ սարքերի և սարքավորումների՝ թոքերի արհեստական շնչառական սարքերի տարրեր (շնչադիմակ, օդափոխիչ, ասպիրատոր), կուվեզներ և նրան հարմարացրած սարքեր, անզգայացման սարքավորումների համալիր մասեր՝ նաև ջերմանկայուն և այլն,
- 3) ստոմատոլոգիայում կիրառվող բժշկական արտադրատեսակներ և սարքավորումներ (արտածծող համակարգ, թքաման, ստոմատոլոգիական արտատպվածք, մետաղական, կերամիկական, պլաստմասսե ատամնապրոթեզներ, ստոմատոլոգիական գործիքներ (մշակվում են ընկղմման եղանակով),
- 4) հիվանդի խնամքի պարագաներ, ինչպես նաև բժշկական կազմակերպություններում օգտագործվող այլ պարագաներ (անձնական հիգիենայի միջոցներ, ռետինե և պոլիպրոպիլենային գորգեր, մոմլաթե տակդիրներ),
- 5) օդափոխության և օդորակման համակարգեր,
- 6) սանիտարա-տեխնիկական սարքավորումներ (այդ թվում հախճապակյա, չուգունե և ակրիլից պատրաստված վաննաներ, ջրաբուժարանային, բուժիչ, ցեխային, հանքային, ջրամերսման և այլ լոգախցիկներ, ՍՊԱ պատիճներ և այլն),
- 7) մաքրման պարագաներ,
- 8) սպիտակեղեն (այդ թվում անհատական, անկողնային), անձնակազմի պաշտպանիչ հագուստ, տեքստիլ նյութերից պատրաստված այլ առարկաներ,
- 9) խաղալիքներ, կոշիկ, ռետինից, պլաստիկից և այլ պոլիմերային նյութերից նյութերից բաղկացած սպորտային պարագաներ,
- 10) ճաշարանային սպասք (այդ թվում միանվագ օգտագործման),
- 11) լաբորատոր, դեղատնային սպասք
- 12) բժշկական թափոններ (Ե, Բ դասերի), այդ թվում միանվագ օգտագործման փափուկ վիրակապական նյութ, միանվագ օգտագործման անկողնային և անհատական

սպիտակեղեն՝ նախքան դրանց օգտահանելը, ինչպես նաև թափոնների հավաքման բազմակի օգտագործման տարաներ,

13) կենսաբանական նյութի, այդ թվում առանձին հավաքագրված (ներառյալ արյուն, արյան շիճուկ և պլազմա, մեզ, կղանք, փոխման զանգված, ողնուղեղային հեղուկ, վիրահատական նյութ, դրենաժային արտադրություն, ախտաբանաանատոմիական թափոնների (հյուսվածքներ, օրգաններ և այլն), էրիթրոցիտար զանգված, հարպտոլային հեղուկ, էնդոսկոպների լվացման ջուր) և դրանց հավաքման տարաները),

14) տրանսպորտի և սարքավորումների մակերեսների (սանիտարական, քաղաքաշտպանության ծառայության, սննդամթերքի տեղափոխման, ուղևորատար, բեռնատար և այլն), երկաթուղային և ջրային տրանսպորտ, օդային տրանսպորտի ցամաքային օբյեկտներ, մետրոպոլիտեն,

15) բնակելի, հասարակական և վարչական շենքերի աղբահեռացման համակարգ, ներառյալ աղբահեռացման սարքավորումներ, աղբատարներ, աղբարկղեր և այլն,

16) բնակչության սպասարկման ոլորտի օբյեկտներում (գեղեցկության սրահ, վարսավիրանոց) կիրառվող գործիքներ, սարքավորումներ, կահավորանք և օժանդակ պարագաներ:

10. Ձեռքային և մեքենայացված (լվացող-ախտահանող մեքենաներում) եղանակներով ճկուն և կոշտ էնդոսկոպների նախնական և հիմնական մաքրման, նախամանրէազերծման մշակման համար՝ նախքան բարձր մակարդակի ախտահանումը:

11. Բժշկական նշանակության իրերի, ներառյալ վիրաբուժական և ստոմատոլոգիական գործիքների (այդ թվում ջերմազգայուն նյութերից պատրաստված պտտվող իրերի), ձեռքային և մեքենայացված (ցանկացած տիպի ուլտրաձայնային սարքավորում) եղանակներով ախտահանման, նախամանրէազերծման մշակման համար:

12. Բացի այդ, միջոցի լուծույթները նախատեսված են համատեղ կիրառելու ախտահանիչ գորգիկների, ախտահանիչ ներքնակների, ախտահանիչ պատնեշների համար, ինչպես նաև բնակչության կողմից կենցաղում կիրառելու համար՝ միջոցի պիտակին համապատասխան:

13. Միջոցի խտանյութն օգտագործվում է միայն կենսաբանական հեղուկ թափոնների ախտահանման համար (կենսաբանական հեղուկներ, ախտահանիչների մշակված լուծույթներ՝ ախտահանման հետ չհամակցված մաքրման համար օգտագործած:

Միջոցի աշխատանքային լուծույթների և խտանյութի կիրառման եղանակների,
պարբերականության և պահպանման ժամկետները

Աղյուսակ 2

Պահպանման պայմանները, կիրառման եղանակները	Պիտանելիության ժամկետները, օգտագործման հաճախականությունը
Միջոցը՝ արտադրողի կողմից փաթեթավորումով (այդ թվում բացվելուց հետո)	5 տարի
Աշխատանքային լուծույթներ՝ փակ ապակե, պլաստմասե կամ արծնապատ առանց էմալի վնասման տարայում, սենյակային ջերմաստիճանում, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված վայրերում պահպանման դեպքում	30 օր
Լուծույթներ՝ շփման և ոռոգման եղանակներով ախտահանման համար	Միանվագ
Լուծույթներ՝ էնդոսկոպիկ սարքավորումների նախնական մաքրման համար	Բազմակի՝ 30 օրվա ընթացքում
Լուծույթներ՝ էնդոսկոպիկ սարքավորումների նախամանրէազերծման /վերջնական մաքրման՝ ախտահանման հետ մեկ փուլում համակցելով:	Բազմակի՝ աշխատանքային հերթափոխի

	ընթացքում, 24 ժամից ոչ ավելի
Լուծույթներ՝ բժշկական գործիքների նախամանրէազերծման /վերջնական մաքրման, ախտահանման հետ մեկ փուլում համակցելով:	Բազմակի՝ 30 օրվա ընթացքում
Լուծույթներ՝ նախնական ախտահանումն անցած բժշկական գործիքների, ինչպես նաև «էսթետիկ մաքուր» առարկաների ախտահանման նպատակով	Բազմակի՝ 30 օրվա ընթացքում
Լուծույթներ՝ նախնական ախտահանման՝ նախամանրէազերծման հետ մեկ փուլում չհամակցված կիրառելու նպատակով	Բազմակի՝ 30 օրվա ընթացքում
Լուծույթներ՝ հետագա բարձր մակարդակի ախտահանում և մանրէազերծում չպահանջող օբյեկտների միջանկյալ մակարդակի եզրափակիչ ախտահանման նպատակով	Միանվագ

14. Արտաքին տեսքի գույնի փոփոխության, պղտորման դեպքում լուծույթը փոխում են: Միջոցի աշխատանքային լուծույթները չունեն սպորասպան հատկություններ: Այդ պատճառով խաչաձև վարակումից խուսափելու նպատակով միջոցի լուծույթները կիսակրիտիկական իրերի եզրափակիչ ախտահանման նպատակով կիրառվում են միանվագ:

4. ՏԱՐԲԵՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Սենքերում մշակման ենթակա մակերեսներն են՝ հատակ, պատեր, դռներ, պատուհաններ, կահույք, սարքավորումներ (այդ թվում ապարատներ և սարքեր):

Ցանկացած մակերեսի ախտահանումը իրականացվում է սրբման և ցողման եղանակով:

16. Սենքերում մակերեսների (հատակ, պատ, դուռ, պատուհան, կահույք, սարքավորում՝ այդ թվում գործիք և ապարատ) ախտահանումն իրականացվում է շփման

կամ ոռոգման եղանակով: Միջոցի լուծույթի ծախսի սահմանված չափաքանակը մակերեսների մշակման ժամանակ կազմում է. շփման եղանակով՝ 100 մ² մակերեսի, ոռոգման եղանակով՝ 300 մ² մակերեսի (հիդրոպուլտի կամ ավտոմաքսի օգտագործմամբ), ոռոգման եղանակով՝ 150 մ² մակերեսի («Կվազար» տեսակի ցողացրիչ) համար:

17. Սենքերում մակերեսների ախտահանման ռեժիմները տարբեր վարակների ժամանակ ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 3-ում, իսկ հիմնական մաքրման ռեժիմները՝ աղյուսակ 4-ում: Ստացիոնարում (բաժանմունքում) բժշկական միջամտություններով պայմանավորված վարակներ (ԲՄՊՎ) հայտնաբերելու դեպքում իրականացնում են ընթացիկ ախտահանում՝ ըստ սույն հրահանգի աղյուսակ 8-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

18. Աղտոտված մակերեսներին կտրող-ծակող առարկաների (կոտրած ապակի, ասեղ և այլն) մաքրման ժամանակ օգտագործում են լրացուցիչ հարմարանքներ (ավել, գոգաթիակ, ունելի և արքան)՝ մաշկի վնասումից խուսափելու համար: Կենսաբանական հեղուկներով փափուկ, ծակոտկեն, անհարթություն ունեցող մակերեսներն աղտոտվելիս՝ մշակում են միջոցի լուծույթով թրջված խոզանակով, օգտագործում են լրացուցիչ վացող նյութեր, իսկ փափուկ կահույքը և գորգերը ենթարկվում են գոլորշային կամ քիմիական մեթոդներով մաքրման:

19. Մշակման մեթոդաբանություն՝ կենսաբանական արտադրություններով չաղտոտված կոշտ մակերեսները շփում են միջոցի աշխատանքային լուծույթով թրջված լաթով կամ ոռոգում ախտահանիչների ցողացրման համար նախատեսված հատուկ հարմարանքներով: Փափուկ մակերեսները մշակում են խոզանակով, պահում ազդեցության ժամանակ և օդափոխում սենքը:

20. Կենսաբանական հեղուկներով ցանկացած աստիճանի աղտոտվածությունն ունի համաճարակաբանական նշանակություն:

21. Փոքր քանակի կենսաբանական հեղուկներով (այդ թվում չորացած) աղտոտված մակերեսները և օբյեկտները մշակում են կրկնակի ախտահանման մեթոդով, հետևյալ սխեմայով: Աղտոտված մակերեսը պատում են ախտահանիչ միջոցով, կանխելով ցայտերի և ճողփյունների առաջացումը, քսում են ախտահանիչը արտաքին եզրերից

դեպի աղտոտվածության կենտրոնը ուղղությամբ: Ուղղահայաց մակերեսները (առաստաղ, պատ, սանդուղք) աշխատանքային լուծույթով պատելու համար օգտագործում են ցողացրիչ կամ հատակմաքրիչ: Ազդեցության պահաժամից (ներկայացված է սույն հրահանգի աղյուսակ 3-ում) հետո ախտահանված կենսաբանական հեղուկը հեռացնում են միջոցի լուծույթով ներծծված մեկանգամյա գործվածքային կամ թղթե անձեռոցիկներով կամ սրբիչներով՝ դրանց հետագա օգտահանմամբ: Մակերեսը կրկնակի մշակում են միջոցի լուծույթով, ազդեցության պահաժամից հետո ախտահանիչի մնացորդները հեռացնելու համար իրականացնում են խոնավ մաքրում:

22. Մեծ քանակի օրգանական աղտոտվածությամբ (արյուն, մեզ, փսխման զանգված) մակերեսների ախտահանման արդյունավետության համար նախապես սորբենտի օգնությամբ հավաքում են թափված հեղուկը: Առավել արդյունավետ է երկփուլ մշակումը:

23. Փուլ 1. Թափվածքի տեղային մաքրումն ու վարակազերծումը չեզոք սորբենտով և միջոցի լուծույթով: Նախ սահմանազատում են թափվածքի մակերեսը և իրականացնում հեղուկի կլանում: Կենսաբանական հեղուկները հավաքելու համար կիրառում են չեզոք սորբենտ (օրինակ՝ մեկանգամյա թղթե (գործվածքե) անձեռոցիկներով) այն քանակով, որ թափվածքն ամբողջովին ներծծվի: Կենսաբանական հեղուկների վարակիչ թափվածքների մաքրումը չեզոք սորբենտներով համակցվում է ախտահանման հետ՝ ախտահանիչի 2% լուծույթով: Այդ թափվածքի մաքրումն առանց ախտահանման անթույլատրելի է: Թափվածքն ամբողջովին կլանելուց հետո, ոռոգման եղանակով ներմուծում են միջոցի աշխատանքային լուծույթ արտաքին եզրերից դեպի աղտոտվածության կենտրոնը՝ կանխելով ցայտերի և ճողփյունների առաջացումը: Ցողացրիչի կիրառման դեպքում միջոցը ցրում են մշակվող մակերեսին հնարավորինս մոտ՝ աէրոզոլների առաջացումը և հեղուկի շաղ տալը կանխելու նպատակով: Հեղուկը կլանելուց հետո սորբենտը հեռացնում են:

24. Փուլ 2. Մակերեսի ախտահանում՝ սորբենտի հեռացումից անմիջապես հետո, իրականացնում են մակերեսի կրկնակի, եզրափակիչ ախտահանում միջոցի աշխատանքային լուծույթով՝ սույն հրահանգի աղյուսակ 3-ում ներկայացված ռեժիմին

համապատասխան՝ շփման կամ ոռոգման եղանակով: Ազդեցության պահաժամից հետո ախտահանիչի մնացորդները հեռացնելու համար իրականացնում են խոնավ մաքրում:

25. Թափվածքի չեզոքացման ստանդարտ հավաքածուն ներառում է միջոցի աշխատանքային լուծույթ, անհատական պաշտպանության միջոցներ (ամուր ձեռնոց, պաշտպանիչ ակնոց, դիմակ, շնչադիմակ, խալաթ), կենսաբանական վտանգի մակնշումով թափոնների փաթեթ, կտրող- ծակող առարկաների օգտահանման համար նախատեսված հերմետիկ կոնտեյներ, մաքրման պարագաներ (գոգաթիակ, ունեղի, աքցան կամ կտրող- ծակող առարկաների հավաքման այլ լրացուցիչ հարմարանքներ):

26. Կենսաբանական արտադրություններ կամ արյուն պարունակող մաքրման պարագաներն օգտահանվում կամ ավտոկլավ են դրվում՝ ըստ գործող կանոնների և նորմատիվների: Առանձին հավաքված կենսաբանական նյութերը (այդ թվում կենսաբանական հեղուկների մեծ թափվածքների հավաքման ժամանակ կլանածը) ախտահանում են փակ կափարիչով տարաների մեջ՝ սույն հրահանգի աղյուսակ 10-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

Աղյուսակ 3

Բժշկական կազմակերպություններում և այլ հաստատություններում մակերեսների տարբեր ախտածնության վարակների մանրէազերծման ռեժիմների առանձնահատկությունները

Վարակի էթիոլոգիան	Վարակազերծման օբյեկտ		
	I	II	III
	Սենքերի մակերեսներ, կոշտ կահույք, սարքավորումների և սարքերի հանգույցներ և այլն	Սենքերի մակերեսներ՝ աղտոտված կենսաբանական հեղուկներով (փոքր և մեծ քանակի)	Փափուկ մակերեսներ, այդ թվում գորգեր և հատակներ, այլ ծածկոցներ, պարուրող

					կտորներ, փափուկ կահույք	
	Մանրէագերծման եղանակները, աշխատանքային լուծույթի խտությունը՝ ըստ նյութի, ազդեցության պահաժամը, %					
	Շփում, ոռոգում		Կրկնակի ոռոգում՝ առանց ժամանակային ընդմիջման կամ ոռոգում՝ հաջորդաբար շփումով		Շփում, մշակում խոզանակի օգնությամբ	
	%	րոպե	%	րոպե	%	րոպե
Մանրէային վարակներ (բացի տուբերկուլոզից)	0,20	60	0,50	30	0,50	30
	0,25	30	1,0	20	1,0	20
	0,5	15	2,0	10	2,0	10
	1,0	10	-	-	-	-
			2,0*	30*		
Վիրուսային	0,25	60	0,50	60	0,50	60
	0,50	30	1,0	30	1,0	30
	1,0	15	2,0	15	2,0	15
	2,0	10	-	-	-	-
			2,0*	30*		
Սնկային (կանդիդոզներ)	0,25	60	0,50	60	0,50	60
	0,50	30	1,0	30	1,0	30

	1,0	15	2,0	15	2,0	15
	2,0	10	-	-	-	-
			2,0*	30*		
Սնկային (դերմատոֆիտիաներ)	0,5	60	1,0	60	1,0	60
	1,0	30	2,0	30	2,0	30
			2,0*	30*		
Սնկային (բորբոսասնկեր)	1,0	60	2,0	60	2,0	60
	2,0	30				
Տուբերկուլոզ	4,0	60	4,0	90	4,0	90
	5,0	30	5,0	60	5,0	60
			2,0*	30*		

Ծանոթություն՝ 1-Օբյեկտների և առարկաների մանրամասն ցանկը, ինչպես նաև դրանց մշակման մեթոդաբանությունը նկարագրված է 3 գլխում:

2-Աշխատանքային լուծույթների խտությունը և ազդեցության պահաժամը կիրառվում է տուբերկուլոզի դեպքում: Թեսթավորվել է *Mycobacterium terrae*-ի վրա:

*Մակերեսների վրա մեծ քանակության կենսաբանական հեղուկների թափվածքի ցանկացած մակերեսի դեպքում իրականացվում է միջոցի 2%-անոց լուծույթի կիրառումով՝ ազդեցության պահաժամը՝ 30րոպե: Ապա մակերեսի մշակումն իրականացվում է միջոցի աշխատանքային լուծույթների օգտագործմամբ՝ համապատասխան վարակի ռեժիմներով (աղյուսակ 3, սյունակ 1):

Աղյուսակ 4

Բժշկական և այլ կազմակերպություններում միջոցի լուծույթներով մակերեսների վարակազերծման ռեժիմները հիմնական մաքրման ժամանակ

Կազմակերպության պրոֆիլը	Լուծույթի խտությունը %, ըստ միջոցի	Պահաժամը, րոպե	Ախտահանման եղանակը
Սոմատիկ բաժանմունքներ (բացի միջամտության սենյակից)	0,25	30	Շփում, ոռոգում
	0,50	15	
	0,5	30	

Վիրաբուժական, ստոմատոլոգիական, մանկաբարձագինեկոլոգիական, միջամտությունների սենյակ և բաժանմունքներ, լաբորատորիաներ, վիրահատարան և վիրակապարան	1,0	15	Շփում, ոռոգում
	2,0	10	
Հակատուբերկուլոզային բժշկական կազմակերպություններ	4,0	60	Շփում, ոռոգում
	5,0	30	
Մաշկավեներական բաժանմունքներ և բժշկական կազմակերպություններ	0,5	60	Շփում, ոռոգում
	1,0	30	
Վարակիչ բժշկական կազմակերպություններ	--	--	Շփում, ոռոգում
Մաքրում՝ ուղղված բորբոսի դեմ պայքարին	1,0	60	Շփում, ոռոգում
	2,0	30	
Մանկական կազմակերպություններ	0,25	30	Շփում, ոռոգում
	0,5	15	

Նշում՝ 1 – Հիմնական մաքրումն իրականացվում է վարակի ռեժիմին համապատասխան:

27. Սանիտարա-տեխնիկական սարքավորումների՝ խեցե, չուգունե և ակրիլային լոգարաններ, լվացարաններ, զուգարանակոնքեր, միզարաններ, ցնցուղարաններ, լոգախցիկներ, բալնեոլոգիական և հիդրոմերսոլ սարքավորումների՝ բուժական, ցեխի, հանքային, հիդրոմերսոլ ավազաններ, ՍՊԱ պատիճներ, հիդրոմերսոլ սարքավորումների եզրեր մշակում են միջոցի լուծույթով, որի ծախսի սահմանված չափաքանակը սանիտարա-տեխնիկական սարքավորման մշակման ժամանակ շփման եղանակով կազմում է 150 մլ/մ² մակերես, ոռոգման եղանակով՝ 300 մլ/մ² մակերես (հիդրոպուլտի, ավտոմաքսի օգտագործմամբ), 150 մլ/մ² մակերես («Կվազար» տեսակի ցողացրիչի օգտագործմամբ): Ոռոգման եղանակով ախտահանումն իրականացնում են անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ: Սանիտարատեխնիկական սարքավորումների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 5-ում:

28. Զուգարանակոնքերի և միզարանների արդյունավետ մշակման համար մակերեսներին առկա կենսաբանական աղտոտվածությունը (կղանք, մեզ և այլն) նախօրոք նվազացնում են, լվանում ջրով: Միջոցի սահմանված խտությամբ և քանակով աշխատանքային լուծույթը (աղյուսակ 5) ներմուծում են մակերեսին՝ շփման կամ

ոռոգման եղանակով, խտանյութ կիրառելիս անկախ բժշկական կազմակերպության տեսակից՝ զուգարանակոնքի մեջ լցնում են 50 մլ միջոց: Մոտ 1 թուփ իրականացնում են մակերեսի մեխանիկական մաքրում՝ մաքրման օժանդակ պարագաներով (օրինակ՝ խոզանակ), առավել ուշադրություն հատկացնելով դժվար հասանելի տեղերի մշակմանը (զուգարանակոնքի օղագոտու տակ), պահաժամից հետո զուգարանակոնքը լվանում են ջրով:

29. Մաքրման նպատակով լոգարանների ու ավազանների պատերին շփման կամ ոռոգման եղանակով լաթի, սպունգի օգնությամբ քսում են սահմանված խտությամբ և քանակով աշխատանքային լուծույթ (աղյուսակ 5): Մոտ 1 թուփ իրականացնում են մակերեսի մեխանիկական մաքրում՝ մաքրման օժանդակ պարագաներով (օրինակ՝ լաթ, խոզանակ), առավել ուշադրություն հատկացնելով դժվար հասանելի տեղերի մշակմանը (ծորակի և հոսարանի շուրջ), սպասում են պահաժամը, ախտահանիչի մնացորդները լվանում են ջրով:

30. Բալնեոլոգիական և հիդրոմերսոլ սարքավորումների մաքրումն ու ախտահանումն իրականացվում է տվյալ բժշկական կամ այլ կազմակերպության սահմանած կանոնակարգին համապատասխան՝ հաշվի առնելով սարքավորման արտադրողի առաջարկները:

1. Մշակման մեթոդաբանություն՝ մաքրման նպատակով լոգարանների ու ավազանների պատերին շփման կամ ոռոգման եղանակով լաթի, սպունգի օգնությամբ քսում են սահմանված խտությամբ և քանակով աշխատանքային լուծույթ (աղյուսակ 5), սպասում են պահաժամը, ախտահանիչի մնացորդները լվանում են ջրով:

2. Հիդրոմերսոլ սարքավորումների ուրվագծերի մշակման մեթոդաբանություն՝ ավազանը լցնում են 18-20°C. ջրով, ավելացնում են միջոց այն քանակությամբ, որն անհրաժեշտ է 1,0% խտությամբ (1 լ խտանյութ 100 լ ջրին): Ախտահանման նպատակով համակարգի մեջ աշխատանքային լուծույթը մղելու համար պոմպը 5 թուփ միացնում են, այնուհետև անջատում և ավազանից դուրս թափում ախտահանիչը: Ավազանը լցնում են մաքուր տաք կամ սառը ջրով, պոմպը միացնում 3 թուփ, անջատում են պոմպը, դուրս թափում ջուրը և պարզաջրում ավազանը:

31. Սանիտարատեխնիկական սարքավորումներից ժանգի, կրային նստվածքի հետքերը նախօրոք մաքրում են հատուկ թթվային լվացող միջոցներով

Աղյուսակ 5

Բժշկական և այլ կազմակերպություններում սանիտարա-տեխնիկական, բալնոլոգիական և հիդրոմետրոլ սարքավորումների վարակազերծման ռեժիմները միջոցի լուծույթներով տարբեր էթիոլոգիայի վարակների համար

Վարակի էթիոլոգիան	Առարկաների և օբյեկտների տեսակը, նյութը և աղտոտվածության աստիճանը							
	Սանիտարատեխնիկական սարքավորում				Բալնեոլոգիական և հիդրոմետրոլ սարքավորումների ներքին մակերեսներ			
	Սարքավորման մակերես՝ առանց տեսանելի աղտոտվածության		Սարքավորման մակերես՝ տեսանելի աղտոտվածությամբ		Սարքավորման մակերես՝ առանց տեսանելի աղտոտվածության		Սարքավորման մակերես՝ տեսանելի աղտոտվածությամբ	
	Ախտահանման եղանակը՝ ոռոգում և շփում							
	Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ պատրաստուկի %							
	%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե
Մանրէային (տուբերկուլոզից բացի)	0,20	60	0,25	60	0,5	15	1,0	20
	0,25	30	0,5	30				
	0,5	15	1,0	20	1,0	10	2,0	10
	1,0	10	2,0	10				
Վիրուսային	0,25	60	0,50	60	1,0	15	1,0	30
	0,5	30	1,0	30				

	1,0	15	2,0	15	2,0	10	2,0	15
	2,0	10	-	-				
Սնկային (կանդիդոզ) ²	0,25	60	0,5	60	1,0	15	1,0	30
	0,5	30	1,0	30				
	1,0	15	2,0	15	2,0	10	2,0	15
	2,0	10	-	-				
Սնկային (դերմատոֆի տիա)	0,5	60	1,0	60	0,5	60	1,0	60
	1,0	30	2,0	30	1,0	30	2,0	30
Բորբոսասնկե ր	1,0	60	2,0	60	-	-	-	-
	2,0	30						
Տուբերկուլոզ ^{2,3}	4,0	60	4,0	90	4,0	60	5,0	60
	5,0	30	5,0	60				

Նշում ¹ Առարկաներն ու օբյեկտները ներկայացված են սույն հրահանգի 3, գլխում

2, Այս տեսակի ախտածին միկրոօրգանիզմների ի հայտ գալը կապված է կենսաբանական հեղուկների առկայության հետ:

3 Թեսթավորվել է *Mycobacterium terrae*-յի վրա:

32. Բժշկական և այլ կազմակերպություններում կիրառվող օժանդակ պարագաներն ու օբյեկտները՝ պացիենտի խնամքի պարագաներ, մաքրման պարագաներ, ձեռնոցով ձեռքեր, մշակում են հաշվի առնելով չափսերը՝ մանր, խոշոր, կառուցվածքային նյութը՝ հարթ, ոչ ծակոտկեն (մետաղ, ապակի, պլաստիկ), ծակոտկեն (ռետին, գործվածք), աղտոտվածության աստիճանը՝ տեսանելի և առանց տեսանելի աղտոտվածության: Այս առարկաների և օբյեկտների ախտահանումն իրականացնում են շփման և ընկղմման մեթոդով, ընդ որում սահմանված է հետևյալ չափաքանակը՝ շփման եղանակով՝ 100 մլ/մ² մակերես, ոռոգման եղանակով՝ 300 մլ/մ² մակերես (հիդրոպուլտի, ավտոմաքսի օգտագործմամբ), ոռոգման եղանակով՝ 150 մլ/մ² մակերես («Կվազար» տեսակի ցողացրիչի օգտագործմամբ): Օժանդակ պարագաների և օբյեկտների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 6-ում:

33. Պացիենտի խնամքի պարագաները (մահճակալի հարմարանքներ, զուգարանի նստոց, նստելատեղ, աստիճան և հարթակ լոգարանի համար, ռետինե գորգեր, զուգարանակոնքի գլխադիր, հենարան զուգարանի սենյակի համար, սառույցի պարկ, ջեռակ, տակդիր օղեր, շարժական աթոռ-զուգարան, գիշերանոթ, տականոթ, միզընդունիչ (այդ թվում տարաներ զուգարանային պարագաների ախտահանման համար), պոլիմերային պաշտպանիչ ծածկույթներ ներքնակների համար, տակդիր մոմլաթ, մոմլաթե պարկեր կեղտոտ սպիտակեղենի համար, մոմլաթե դռնիկ, պացիենտի տեղափոխման հարթակներ, հաշմանդամի սայլակ, ձեռնափայտ, հենակ, քայլակ, մերսիչ, բռնակ, թեքահարթակ) շփում են միջոցով թրջված լաթով կամ ոռոգում՝ սույն հրահանգի աղյուսակ 6-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

34. Այլ օժանդակ պարագաները, որոնք օգտագործվում են բժշկական կազմակերպություններում ընթացիկ աշխատանքներում (ռետինե ձեռնոց, ռետինե և կիրգայե ճտքակոշիկ, կաշվից կամ կաշվի փոխարինիչից հողաթափեր, խաղալիք (փայտե, պլաստմասե, ռետինե, մետաղյա)), շփում են միջոցի լուծույթով թրջված լաթով: Խոշոր առարկաները, որոնց շփումը դժվար է, մշակվում են ոռոգման եղանակով: Խոշոր առարկաները, ինչպես նաև կոշիկի արտաքին և ներքին մակերեսները, որոնց ընկղմումը դժվար է, մշակում են ոռոգման եղանակով: Մանր պարագաներն ամբողջությամբ ընկղմում են միջոցի լուծույթի մեջ: Ախտահանումից հետո պարզաջրում են հոսող ջրով 3 րոպե, որից հետո դրանք չորացնում են:

35. Յուրաքանչյուր պացիենտից հետո բուժաշխատողը փոխում է ձեռնոցը: Արյունով կամ կենսաբանական հեղուկներով ձեռնոցների աղտոտման դեպքում՝ հանելու ընթացքում ձեռքերի աղտոտումից խուսափելու համար ձեռնոցների տեսանելի աղտոտվածությունը մաքրում են միջոցի լուծույթով թրջած տամպոնով (անձեռոցիկով), բուժաշխատողների, մանրէաբանական լաբորատորիաների աշխատողների ձեռնոցները, անգամ վարակիչ նյութը ձեռնոցներին թափվելուց ախտահանում են (քլորոպրենային կաուչուկից, լատեքսից, նեոպրենից, նիտրիլից և քիմիական նյութերի նկատմամբ կայուն այլ նյութերի: Ախտահանման կոնտեյնների մեջ լցնում են 10 % խտության միջոցի աշխատանքային լուծույթ, ձեռնոցները հագին՝ ձեռքերն ամբողջովին

ընկղմում են ախտահանիչ լուծույթի մեջ 2 րոպե: Ախտահանված ձեռնոցները հանում են և գցում թափոնների օգտահանման համար նախատեսված կոնտեյների մեջ:

36. Մաքրման պարագաները՝ խոզանակ և հատակմաքրիչ, ֆլաունդեր, մոպ, գոգաթիակ, սայլակ, դոյլ, զամբյուղ և բաք, լաթեր, անձեռոցիկներ (գործվածքից կամ ոչ գործվածքային նյութից), ինչպես նաև հավաքման մեքենաների տարբեր մասեր և հավաքման տարբեր պարագաներ, ընկղմում են միջոցի լուծույթի մեջ այնպես, որ առարկաները 1 սմ-ից ոչ պակաս շերտով ծածկվեն, ախտահանումից հետո լվանում են ջրով և չորացնում: Խոշոր առարկաները, որոնց մշակումն ընկղմման եղանակով հնարավոր չէ, լուծույթով թրջված լաթով շփում կամ ոռոգում են: Մաքրման պարագաների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 6-ում: Գործվածքից կազմված առարկաները մշակում են ընկղմման եղանակով՝ 1 կգ չոր գործվածքին 5 լ աշխատանքային հեղուկ հաշվարկով: Պահաժամից հետո առարկաները լվանում են ջրով:

37. Բժշկական կազմակերպության սպիտակեղենը՝ անհատական և անկողնային սպիտակեղեն, սրբիչներ, բարուրաշորեր, անձնակազմի պաշտպանիչ հագուստ՝ խալաթ, արտահագուստ, գլխարկ, դիմակ, գլխաշոր և տեքստիլից պատրաստված այլ առարկաներ ախտահանում են: Սպիտակեղենի ախտահանման համար կիրառում են 1 կգ չոր սպիտակեղենին 5 լ աշխատանքային լուծույթ հաշվարկով: Տուբերկուլոզով հիվանդների արյունով կամ կենսաբանական հեղուկներով աղտոտված սպիտակեղենը (այդ թվում թաշկինակները, թքամանների առդիր գրպանիկները՝ ֆլանելից պատյանները) ախտահանում են միայն կենսաբանական հեղուկներով աղտոտված, միկոբակտերիայի նկատմամբ արդյունավետ ախտահանման ռեժիմով: Այդ առարկաներն ախտահանում են ընդհանուր սպիտակեղենից առանձին: Միջոցի աշխատանքային լուծույթներն օժտված չեն սպիտակեցնող հատկությամբ: Սպիտակեղենի վարակազերծման ռեժիմները ներկայացված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

Բժշկական և այլ կազմակերպություններում օժանդակ առարկաների, օբյեկտների, մաքրման պարագաների, սպասքի և սպիտակեղենի վարակազերծման ռեժիմները
միջոցի լուծույթներով տարբեր էթիոլոգիայի վարակների ժամանակ

Վարակազերծման օբյեկտը¹	Վարակի էթիոլոգիան²												
	Մանրէային/բացի տուբերկուլոզից		Վիրուսային		Սնկային						տուբերկուլոզ		
					կանդիդոզներ		դերմատոֆիտիաներ		բորբոս				
	%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե	
Վարակազերծման եղանակը՝ մանր առարկաներ՝ ընկղմում, թրջում,խոշոր՝ շփում կամ ոռոգում													
Օժանդակ պարագաներ՝ մետաղից, պլաստմասսե, ապակուց և ուետինե: Հիվանդի խնամքի պարագաներ	0,25	60	0,5	60	0,5	60	1,0	60	2,0	60	5,0	60	
	0,50	30	1,0	30	1,0	30	2,0	30			6,0	30	
	1,0	15	2,0	15	2,0	15	-	-			-	-	
Վարակազերծման եղանակը՝ մանր առարկաները՝ ընկղմում, թրջում, խոշորները՝ շփում կամ ընկղմում													
Մաքրման պարագաներ՝ չաղտոտված կենսաբանական հեղուկներով	0,5	60	0,5	60	0,5	60	1,0	60	2,0	60	5,0	60	
	1,0	30	1,0	30	1,0	30	2,0	30			6,0	30	
	2,0	15	2,0	15	2,0	15					-	-	
Մաքրման պարագաներ՝ աղտոտված կենսաբանական հեղուկներով	1,0	60	1,0	60	1,0	60	2,0	60	3,0	30	7,0	60	
	2,0	30	2,0	30	2,0	30	3,0	30			8,0	30	
Վարակազերծման եղանակը՝ ընկղմում													
Սպասք, այդ թվում միանգամյա օգտագործման՝ առանց սննդի մնացորդների	0,25	60	0,5	60	0,5	60	1,0	60	2,0	60	5,0	60	
	0,5	30	1,0	30	1,0	30	2,0	30			6,0	30	
	1,0	15	2,0	15	2,0	15					-	-	
Սպասք, այդ թվում միանգամյա սննդի օգտագործման մնացորդներով	0,5	60	1,0	60	1,0	60	2,0	60			7,0	60	
	1,0	30	2,0	30	2,0	30	3,0	30			8,0	30	
	1,5	15	-	-	-	-	-	-			-	-	
Վարակազերծման եղանակը՝ ընկղմում, թրջում													

Սպիտակեղեն. Կտորե արտադրատեսակներ, չաղտոտված կենսաբանական հեղուկներով	0,25	60	0,5	60	0,5	60	1,0	60	3,0	30	5,0	60
	0,50	30	1,0	30	1,0	30	1,5	30			6,0	30
	1,0	15	2,0	15	2,0	15	-	-			-	-
Սպիտակեղեն. Կտորե արտադրատեսակներ, չաղտոտված կենսաբանական հեղուկներով	1,0	60	1,0	60	1,0	60	2,0	60	3,0	30	7,0	60
	2,0	30	2,0	30	2,0	30	3,0	30			8,0	30
Վարակազերծման եղանակը՝ շփում, ընկղմում, ոռոգում												
Ռետինե և պոլիպրոպիլենային գորգիկներ. Կոշկեղեն	0,25	60	0,5	60	0,5	60	1,0	60	1,5	60	5,0	60
	0,50	30	1,0	30	1,0	30	1,5	30			6,0	30
	1,0	15	2,0	15	2,0	15	-	-			-	-

Ծանոթություն 1-մշակման մեթոդաբանությունը ներկայացված է

2՝ Աշխատանքային լուծույթների խտությունը և ազդեցության պահաժամը կիրառվում է տուբերկուլոզի դեպքում: Թեսթավորումն իրականացված է *Mycobacterium terrae*-ի վրա:

38. Օդափոխության և օդորակման համակարգի (կենցաղային օդափոխիչներ, սալիտ-համակարգեր, մուլտիզոնալ սալիտ-համակարգեր, տանիքի օդափոխիչներ և այլն) իրականացնում են փոշեցրման, ընկղմման և շփման եղանակներով սույն հրահանգի աղյուսակ 7-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Օդի դեզոդորացումը, հոտերի չեզոքացումը, ախտահանումն իրականացնում են համապատասխան տեխնիկական սարքավորման (աէրոզոլների գեներատոր) օգնությամբ՝ միջոցի աշխատանքային լուծույթի փոշեցրում սույն հրահանգի աղյուսակ 7-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան, 10 մլ/մ² ծախսի նորմայով: Սկզբում իրականացնում են սենքերի մակերեսների նախնական ախտահանում, ապահովում են սենքի հերմետիկություն, փակում են դռներն ու պատուհանները, անջատում ներծիգ-արտածիգ օդափոխությունը: Ախտահանման ավարտից հետո սենքը 15 րոպե օդափոխում են:

Օդափոխության և օդորակման համակարգի, ինչպես նաև օդի ախտահանման
ռեժիմները միջոցի աշխատանքային լուծույթով

Մշակվող օբյեկտներ		Լուծույթի խտությունն ըստ միջոցի %	Ազդեցության պահաժամը, րոպե	Ախտահանման եղանակը
Կենտրոնական և կենցաղային օդափոխիչների և ընդհանուր օդափոխանակության բաժիններ, օդընդունիչ և օդաբաշխիչներ		0,25	60	Շփում կամ ռոռոգում
		0,5	30	
Օդային ֆիլտրեր ¹		0,5	90	Ընկղմում
		1,0	60	
Ռադիատորների վանդակաճաղեր, գլխադիրներ, կոնդենսատի կուտակիչներ		0,25	60	Շփում
		0,5	30	
Օդամուղներ		0,25	60	Ռոռոգում
		0,5	30	
Սենքերի օդի մշակում	Մանրէային վարակներ (տուբերկուլոզից բացի)	0,5	60	Փռչեցրում
		1,0	30	
	Վիրուսային վարակներ	1,0	30	
		2,0	15	
	Սնկային վարակներ	1,0	30	
		2,0	15	
	Տուբերկուլոզի դեպքում ²	5,0	60	
		6,0	30	

39. Ախտահանիչ գորգերի, ներքնակների և պատնեշների հազեցման (տոգորման) նպատակով կիրառում են միջոցի լուծույթ՝ 2,0 % խտությամբ: Լուծույթի ծավալը կախված է արտադրատեսակի չափսերից և նշված է ախտահանիչ գորգի կիրառման հրահանգում: Աշխատանքային լուծույթի փոփոխման հաճախականությունը կախված է գորգի օգտագործման ինտենսիվությունից (միջինը՝ 3 օրը մեկ): Ախտահանիչ պատնեշի կիրառման կարգը մանրամասն նկարագրված է արտադրողի կողմից, հարմարանքներին կից հրահանգում:

5. ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ՄԻՋՈՑԻ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐՈՎ
ՆԵՐՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՎԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՐՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿ

40. Ստացիոնարում (բաժանմունքում) ներհիվանդանոցային վարակի (ՆՀՎ) հարուցչի հայտնաբերման ժամանակ, ներառյալ ժամանակակից հոսպիտալային (կլինիկական) լայն դեղորայքակայուն շտամները, պացիենտի հետ շփում ունեցող բոլոր օբյեկտների (ներառյալ սենքերի մակերեսները, կահավորանքի և խնամքի պարագաները, բժշկական արտադրատեսակները, արտադրությունները և կենսաբանական հեղուկները, բժշկական թափոնները) ախտահանումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 8-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

Աղյուսակ 8

Ներհիվանդանոցային վարակների¹ հարուցիչներով, ներառյալ ժամանակակից հոսպիտալային (կլինիկական) դեղորայքակայուն շտամներով բաղարկված տարբեր օբյեկտների վարակազերծման ռեժիմները² միջոցի լուծույթներով

Ախտահանման օբյեկտ	Վարակի էթիոլոգիան		Մշակման եղանակը
	Գրամ (–) բակտերիաներ ³ Գրամ (+) բակտերիաներ ⁴		
	Աշխատանքայի ն լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	Ախտահանման պահաժամը, րոպե	
Սենքերի մակերեսները, կոշտ կահույք, սարքեր, սարքավորումներ առանց օրգանական աղտոտվածության	0,5	60	Շփում, ոռոգում
	1,0	30	
Սենքերի մակերեսները, կոշտ կահույք, սարքեր, սարքավորումներ օրգանական աղտոտվածությամբ	1,0	60	Շփում, ոռոգում
Դեղատնային և լաբորատոր սպասք (փորձանոթներ, պիպետներ, Պետրիի թասիկներ, առարկայական ապակիներ և այլն), սպասքի լվացման համար օգտագործվող առարկաները	1,0	60	Թրջում ընկղմում
	2,0	30	

Բժշկական արտադրատեսակներ (այդ թվում կտրող-ծակող) ներառյալ ատամնաբուժական գործիքներ, ատամնատպվածքներ և հիվանդի խնամքի պարագաներ:	1,0	60	Ընկղմում Թրջում
	2,0	30	
Ճաշարանային սպասք, այդ թվում միանվագ օգտագործման՝ սննդի մնացորդներով	1,0	60	Թրջում ընկղմում
Բամբակյա կամ սինթետիկ գործվածքից սպիտակեղեն և հագուստ օրգանական աղտոտվածությամբ:	1,5	60	Թրջում
	2,0	30	
Սանիտարատեխնիկական սարքավորումներ	0,5	60	Շփում, ռռոզում
	1,0	30	
Մաքրման պարագաներ	1,0	60	Շփում, ռռոզում
	2,0	30	

Նշումներ ¹- Տվյալ ռեժիմներն օգտագործվում են ստացիոնարում (բաժանմունքում) ներհիվանդանոցային վարակների հարուցիչների հայտնաբերման դեպքում

²-թեստավորված է օգտագործելով *Klebsiella pneumoniae* 22, *Pseudomonas aeruginosa*, *Acinetobacter baumannii* 221, *Staphylococcus haemolyticus* 39.

³- Գրամբացասական մանրէներ *Klebsiella pneumoniae* 22, *Pseudomonas aeruginosa*, *Acinetobacter baumannii* 221, ներառյալ ժամանակակից հոսպիտալային (կլինիկական) շտամները

⁴-Գրամդրական մանրէներ *Staphylococcus haemolyticus* 39, ներառյալ ժամանակակից հոսպիտալային (կլինիկական) շտամները

6. ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԹԱՓՈՆՆԵՐ

41. Բժշկական թափոնների ախտահանումը բժշկական և այլ կազմակերպություններում իրականացվում է գործող սանիտարական կանոններին համապատասխան:

42. Միջոցը և նրա աշխատանքային լուծույթներն օգտագործվում են հետևյալ թափոնների և նրանց հավաքման տարաների մշակման համար՝

1) Կենսաբանական հեղուկներով աղտոտված մեկանգամյա օգտագործման բժշկական արտադրատեսակներ՝ մետաղից, ապակուց, պլաստմասից, ռետինից,

2) Կենսաբանական հեղուկներով աղտոտված վիրակապական նյութ, անձնակազմի արտահագուստ, մեկանգամյա օգտագործման սպիտակեղեն և գործվածքից այլ արտադրատեսակներ, որոնք աղտոտված են կենսաբանական հեղուկներով:

3) Հեղուկ թափոններ, լվացման ջրեր, այդ թվում հեղուկ՝ բկանցքի ողողումից հետո:

4) Կենսանյութ (մեզ, կղանք, խորխ, էնդոտրախեալ ասպիրատ, փոխման զանգված, ողնուղեղային հեղուկ, դրենաժային նյութ, վիրահատական նյութ, լվացման ջրեր, այդ թվում էնդոսկոպիկ, պաթոլոգիաանատոմիական, օրգանական վիրահատական թափոններ (օրգաններ, հյուսվածքներ և այլն), արյուն և արյամբ խառնված կենսահեղուկներ), ինչպես նաև սննդի մնացորդներ:

5) Մանրէաբանական լաբորատորիաների թափոններ (շտամներ, նմուշներ, պատվաստանյութեր, 3-4 դասի ախտածնության վիրուսաբանական վտանգավոր նյութ):

6) Շենքերի աղբահեռացման համակարգ, ներառյալ աղբահեռացման սարքավորումներ, աղբատար մեքենաներ, աղբարկղեր և այլն,

7) Բժշկական կազմակերպության բոլոր բաժանմունքների (բացառությամբ վարակիչ, մաշկա-վեներական, հակատուբերկուլոզային) A դասի թափոնների, ոչ վարակիչ թափոնների (վարակիչ հիվանդների, պացիենտների կենսաբանական հեղուկների հետ շփում չունեցած) հավաքման բազմակի օգտագործման տարաներ:

8) B և B դասի թափոնների հավաքման տարաներ, աղբատար մեքենայի թափք:

9) Ախտահանման և լվացման պոտենցիալ վարակիչ աշխատանքային լուծույթներ, որոնք կիրառվում են բժշկական արտադրատեսակների ախտահանման հետ չհամակցված մաքրման նախամանրէազերծման մշակման փուլում:

10) Լվացման ջրեր, որոնք առաջանում են բժշկական արտադրատեսակների ախտահանման հետ չհամակցված մաքրման փուլում ախտահանիչներով աշխատելիս:

43. B և B դասի թափոնները վարակազերծվում են թափոնների առաջնային հավաքման տեղերում, ախտահանիչ լուծույթի մեջ ընկղմման եղանակով, հատուկ առաձնացված տարողության մեջ, մեկանգամյա փաթեթով փաթեթավորումից

45. Ախտահանումից հետո կեղտաջրերը թափվում են բժշկական կազմակերպության կոյուղու մեջ: Բժշկական թափոնների և նրանց հավաքման ու հեռացման բեռնարկերը մշակում են աղյուսակ 9, 10-ում ներկայագված ռեժիմներով:

Բժշկական թափոնների հավաքման տարաների, աղբահավաք սարքավորումների
ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով

Մշակվող օբյեկտները	Մշակվող օբյեկտների նյութը, աղտոտվածության աստիճանը	Վարակի էթիոլոգիան					
		Մանրէային, վիրուսային, սնկային (կանդիդոզներ) ¹		Սնկային (դերմատոֆիտիաներ) ¹		Տուբերկուլոզ ^{2,4}	
		Լուծույթի խտությունը ըստ նյութի, %, ազդեցության պահաժամը՝ րոպե					
		%	րոպե	%	րոպե	%	րոպե
Մշակման եղանակները՝ շփում, ոռոգում կամ ընկղմում							
Ա,Բ,Գ դասի թափոններ բազմակի օգտագործման հավաքածուներ՝ առանց կենսաբանական հեղուկների շփման ³	Պարզ կառուցվածքի պլաստիկե, մետաղե և այլ հարթ ոչ ծակոտկեն նյութերից տարաներ, այդ թվում ոչ տեսանելի աղտոտվածությամբ	0.25	60	0.5	60	4.0	60
		0.5	30				
		1.0	15	1.0	30	5.0	30
Մշակման եղանակները՝ ընկղմում							

Հիվանդի արտազատուկների տարաներ, լաբորատոր սպասք և մակերեսներ, որտեղ իրականացվում է կենսանյութի հավաքում	-	-	-	-	7,0	60	
					8,0	30	
Թքամաններ՝ խորխից մաքրված	-	-	-	-	7,0	60	
					8,0	30	
Մշակման եղանակները՝ շփում, ընկղմում							
Աղբահեռացման սարքավորումներ, աղբավայրեր և աղբարկղներ	Պլաստիկից, մետաղից և այլ հարթ, ոչ ծակոտ կեն նյութերից պատրաստված պարզ կառուցվածքով տարաներ՝ տեսանելի աղտոտվածությամբ	0,25	60	0.5	60	4.0	60
		0,5	30				
		1.0	15	1.0	30	5.0	30

Նշումներ ¹- Ե դասի թափոնների համար

²- Ե դասի թափոնների համար

³- A և B դասի թափոնների տարաների վարակազերծումն իրականացվում է մանրէային և վիրուսային ռեժիմներով, B դասը՝ տուբերկուլոզի

⁴- Թեսթավորված է *Mycobacterium terrae*-յի վրա

Աղյուսակ 10

Բժշկական և այլ կազմակերպություններում առաջացող բժշկական թափոնների ախտահանման ռեժիմները միջոցի լուծույթներով

Մշակման ենթակա օբյեկտները	Մշակվող օբյեկտների նյութը, աղտոտման աստիճանը	Վարակի էթիոլոգիան					
		Մանրէային, վիրուսային, սնկային (կանդիդոզներ) ¹		սնկային (դերմատոֆիտիաներ) ¹		Տուբերկուլոզ ^{2,4}	
		Լուծույթի խտությունը ըստ նյութի, %, ազդեցության պահաժամը					
		%	րոպե	%	րոպե	%	րոպե
Մշակման եղանակները՝ շփում, ընկղմում							
Կենսաբանական հեղուկներով աղտոտված միանգամյա օգտագործման իրեր	Բժշկական արտադրատեսակներ միանվագ օգտագործման՝ մետաղյա, ապակե,	0,5	90	2,0	60	7,0	60
		1,0	60	3,0	30	8,0	30
		2,0	30				

	պլաստմասսե, ռետինե						
	Վիրակապական նյութեր, միանգամյա սպիտակեղեն, անձնակազմի հագուստ և այլ կտորե արտադրատեսակնե ր, ռետինե ձեռնոցներ	1,0	60	2,0	60	7,0	60
		2,0	30	3,0	30	8,0	30
Մշակման եղանակը՝ մանրակրկիտ խառնում							
Կենսաբանական հեղուկներ	Հեղուկ թափոններ, լվացման ջրեր ներառյալ էնդոսկոպիկ լվացման ջրեր, արյուն և կենսաբանական հեղուկներ՝ խառնված արյան հետ, շիճուկ, հիվանդի արտազատուկներ (խորխ, փսխման զանգված և այլն)	Խառնում միջոցի 2%անոց լուծույթի հետ 1:2 հարաբեր ությամբ	60	Խառնում միջոցի 4%անոց լուծույթի հետ 1:2 հարաբեր ությամբ	60	Խառնում միջոցի 10%անոց լուծույթի հետ 1:1 հարաբեր ությամբ	60
		Խառնում միջոցի 3%անոց լուծույթի հետ 1:2 հարաբերու թյամբ	30	Խառնում միջոցի 5%անոց լուծույթի հետ 1:2 հարաբեր ությամբ	30		
	Մեզ, հեղուկ կոկորդի ողողումից հետո	Խառնում միջոցի 4%անոց լուծույթի հետ 1:1 հարաբերու թյամբ	30	Խառնում միջոցի 4%անոց լուծույթի հետ 1:1 հարաբեր ությամբ	60	Խառնում միջոցի 10%անոց լուծույթի հետ՝ 1:1 հարաբեր ությամբ	60
		30մլ խտանյութ 1լ-ին	15	30մլ խտանյութ 1լ-ին	30		
	Սննդի մնացորդներ	Խառնում միջոցի 4%անոց լուծույթի հետ՝ 1:1 հարաբ.	30	Խառնում միջոցի 4%անոց լուծույթի հետ՝ 1:1 հարաբ.	60	Խառնում միջոցի 10%անոց լուծույթի հետ՝ 1:1 հարաբ.	60

	Մանրէաբանական լաբորատորիաների թափոններ(վակցին աներ, կուլտուրաներ, շտամներ, վիրուսաբանական նյութեր և այլն)	Խառնում միջոցի 2%անոց լուծույթի հետ՝ 1:2 հարաբ.	60	Խառնում միջոցի 4%անոց լուծույթի հետ՝ 1:2 հարաբ.	60	Խառնում միջոցի 10%անոց լուծույթի հետ՝ 1:1 հարաբ.	60
		Խառնում միջոցի 3,0%անոց լուծույթի հետ՝ հարաբ.1:2	30	Խառնում միջոցի 5,0%անոց լուծույթի հետ՝ հարաբ.1:2	30		
Ախտահանման և վազման պոտենցիալ վարակիչ աշխատանքային լուծույթներ, ինչպես նաև այդ էտապում առաջացած վազման ջրեր	Քիմիական բաղադրիչների մնացորդային քանակներ և կենսաբանական աղտոտվածությամբ ջրային լուծույթներ	20 մլ խտանյութ 1լ-ին	30	20մլ խտանյութ 1լ-ին	60	50մլ խտանյութ 1լ-ին	60
		30 մլ խտանյութ 1լ-ին	15	30 մլ խտանյութ 1լ-ին	30	60 խտանյութ 1լ-ին	30

Նշումներ ¹- Ե դասի թափոնների համար

²- Բ դասի թափոնների համար

³- Կենսաբանական հեղուկների տեսակները ներկայացված են սանիտարական կանոններում

⁴- Թեսթավորված է *Mycobacterium terrae*-յի վրա

7. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՁՎԻ ԿԵՂԵՎԻ ՄԱԿԵՐԵՍԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

46. Միջոցի լուծույթով ձվի սանիտարական մշակումն իրականացվում է ձեռքային և մեքենայացված եղանակներով, վնասված կեղևով ձուն չի մշակվում: Գեներատոր Յ6-ՓՅԱ տիպի մեքենայացված սարքում ձվերի սանիտարական մշակման ժամանակ ձվերը միջադիրներից տեղափոխվում են սարքի փոխադրիչի վրա և իրականացվում է բազմափուլ սանիտարական մշակում՝ ձվի դիտարկում (օվոսկոպիա), լվացում, պարզաջրում, ախտահանում և կրկնակի պարզաջրում:

47. Մշակման ենթակա ձուն դիտարկվում է միջադիրներով, վնասված կեղևով ձուն նետում են տեխնիկական խոտանի համար նախատեսված տարաներ: Խոտանվածի փոխարեն միջադիրների վրա տեղադրվում է չվնասված կեղևով ձու՝ լրացնելով բոլոր խորշերը:

48. Ձվով միջադիրները ձեռքով տեղադրվում են բեռնաթափման սարքի անվավոր փոխադրիչի վրա, որը դրանք փոխանցում է դիտարկման գոտի, որտեղ իրականացվում է ձվերի տեսակավորում, խոտանը փոխարինվում է պիտանի (նախապես դիտարկված) ձվով:

49. Լվացումն իրականացվում է 2 րոպե տևողությամբ անվավոր փոխադրիչի լվացման խցիկում, որտեղ կեղևի մակերեսը ենթարկվում է նեյլոնից, շարժվող խոզանակների մեխանիկական ազդեցության, որի ընթացքում ձուն թրջվում է $38\pm 2^{\circ}\text{C}$ լվացող հեղուկով: Որպես լվացող հեղուկ օգտագործվում է կաուստիկ սոդայի 0,5% լուծույթ կամ կալցինացված սոդայի 0,5% լուծույթ:

50. Ձվի կեղևի ախտահանումն իրականացվում է 2,0% լուծույթով, $20\pm 2^{\circ}\text{C}$ պայմաններում, 2 րոպե, մակերեսի պարզաջրումն իրականացվում է ջրմուղի ջրով 10 վայրկյան տևողությամբ:

51. Ձեռքով սանիտարական մշակման ժամանակ ձուն դիտարկվում է՝ առանձնացնելով տեխնիկական խոտանը, սննդային ոչ լիարժեք ձուն և տեսանելի մաքուր կեղևով ձուն՝ աղտոտվածից:

52. Աղտոտված կեղևով ձուն տեղավորում են արկղերում, պլաստմասե միջադիրներում կամ այլ տարայում, տեղադրում վաննաներում ցանցերի վրա՝ 10 րոպե տևողությամբ $28\pm 2^{\circ}$ պայմաններում լվացող հեղուկում թրջելու նպատակով: Որպես լվացող հեղուկ օգտագործվում է կաուստիկ սոդայի 0,5% լուծույթ, կալցինացված սոդայի 0,5% լուծույթ:

53. Թրջելուց հետո ձուն մաքրում են խոզանակով և լվանում ջրով, ցնցուղով, $18\pm 2^{\circ}$: Տեսանելի մաքուր կեղևով և թրջած, լվացած ձվերն ուղարկվում են ախտահանման, որն իրականացվում է ընկղմելով միջոցի 2,0% լուծույթի մեջ 5 րոպե տևողությամբ հատուկ փոխադրիչի միջոցով կամ ձեռքով:

54. Պահանջվող ժամանակի ավարտին ձվերով տարան հանվում է, ողողվում 10 րոպե տևողությամբ և տեղադրվում ցանցերի վրա 15-20 րոպե տևողությամբ, որից հետո փոխանցվում է ձու կոտրելու բաժանմունք կամ հանձնվում պահպանման ոչ ավել, քան 12 օր տևողությամբ 0°C մինչև 20°C և 85-88% օդի հարաբերական խոնավության պայմաններում:

55. Ճաշատեսակների պատրաստման համար օգտագործվող ձվի մշակումն իրականացվում է հատուկ առանձնացված վայրում, մակնշված տարաներում՝ համաձայն գործող իրավական ակտերի պահանջների:

56. Տեսանելի աղտոտվածությամբ կեղևով հավկիթը թրջելու համար օգտագործվում են սահմանված կարգով պաշտոնապես գրանցված և թույլտվություն ունեցող միջոցներ, օրինակ, կալցինացված սոդայի 0,5% լուծույթ, կաուստիկ սոդայի 0,2% լուծույթ կամ միջոցի 0,5% լուծույթ $28 \pm 2^{\circ}\text{C}$ պայմաններում առնվազն 10 րոպե տևողությամբ:

57. Թրջելուց հետո ձուն մաքրվում է ցնցուղի տակ, խոզանակներով, $18 \pm 2^{\circ}\text{C}$ ջրով և տեղափոխվում հետագա սանիտարական մշակման:

58. Առանց տեսանելի աղտոտվածության և թրջելուց հետո տեսանելի աղտոտվածությամբ ձուն լվացվում է լվացող հեղուկով, պարզաջրվում հոսող սառը ջրով և ախտահանվում՝ ընկղմելով միջոցի 1,0 % լուծույթի մեջ 15 րոպե տևողությամբ, 2,0 % լուծույթի մեջ՝ 5 րոպե, որից հետո կրկին պարզաջրվում հոսող սառը ջրով: Մաքուր ձուն տեղադրվում է մաքուր, մակնշված տարայի մեջ:

59. Ձվի մակերեսից միջոցի մնացորդների լիարժեք հեռացման աստիճանը որոշվում է ողողման ջրերում հիմնայնության առկայությամբ (բացակայությամբ): Մնացորդային հիմնայնության հսկողությունն իրականացնում են ունիվերսալ զգայորոշիչ թեստի միջոցով՝ ընկղմելով այն ողողման ջրերի մեջ և հետո այն դնելով մշակվող օբյեկտի մակերեսին:

8. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

60. Վարակիչ հիվանդներին տեղափոխող սանիտարական տրանսպորտը, աղտոտված սպիտակեղենը և բժշկական արտադրատեսակները վարակազերծում են՝ ելնելով արտաքին և ներքին մակերեսների աղտոտվածությունից: Տրանսպորտի ախտահանումն իրականացնում են շփման և ոռոգման եղանակով, ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 11-ում: Սննդամթերք տեղափոխող ավտոտրանսպորտը վարակազերծում են մանրէային ռեժիմով, ախտահանումից հետո մշակված մակերեսները լվանում են ջրով և չորացնում: Հանրային տրանսպորտը վարակազերծում են մանրէային ռեժիմով, իսկ ձեռքերի հետ հաճախակի շփվող

մակերեսները՝ սնկային վարակների ռեժիմին համապատասխան: Վիրուսային համաճարակների ժամանակ հանրային տրանսպորտի մակերեսներն ախտահանում են վիրուսային ռեժիմով:

Աղյուսակ 11

Տրանսպորտային միջոցների վարակազերծման ռեժիմները միջոցի լուծույթներով տարբեր էթիոլոգիայի վարակների ժամանակ

Վարակազերծվող օբյեկտը	Աշխատանքային լուծույթի խտությունը (ըստ նյութի)	Վարակի էթիոլոգիան, ազդեցության պահաժամը (րոպե)				Վարակազերծման եղանակը
		Մանրէային (բացի տուբերկուլոզից)	Վիրուսային (բացի տուբերկուլոզից)	Վիրուսային Սնկային (կանդիդոզներ)	Սնկային (դերմատոֆիտիաներ)	
		%	րոպե	րոպե	րոպե	
Սանիտարական ավտոտրանսպորտ (կախված վարակի էթիոլոգիայից)՝ առանց տեսանելի աղտոտվածության	0,20	60	-	-	-	Շփում, ոռոգում (պինդ մակերեսներ) Մշակում խոզանակով, թրջված միջոցի լուծույթի մեջ (փափուկ և ծակոտկեն մակերեսներ)
	0,25	30	60	60	-	
	0,5	15	30	30	-	
	1,0	10	15	15	-	
	2,0	15	10	10	-	
	4,0	-	-	-	60	
	5,0	-	-	-	30	
Սանիտարական ավտոտրանսպորտ (կախված վարակի էթիոլոգիայից)՝ կենսաբանական հեղուկներով աղտոտված	0,50	60	60	60	-	
	1,0	30	30	30	-	
	2,0	15	15	15	-	
	4,0	-	-	-	90	
	5,0	-	-	-	60	
Հանրային տրանսպորտ	0,2	60	-	-	-	
	0,25	30	60	-	-	
	0,5	15	30	-	-	
	1,0	10	15	-	-	
	2,0	15	10	-	-	

Հասարակական տրանսպորտի մակերեսներ, որոնք ունեն ձեռքերի հետ հաճախակի շփում (բազրիքներ)	0,5	-	-	60	-	
	1,0	-	-	30	-	
Սննդամթերքի փոխադրման տրանսպորտ	0,25	30	-	-	-	
	0,5	15	-	-	-	

Նշումներ 1՝ Միջոցի աշխատանքային լուծույթի խտությունը և ազդեցության պահաժամը, կիրառվում են տուբերկուլոզի էթիոլոգիայի դեպքում:

Թեսթավորված է *Mycobacterium terrae*-ի վրա:

9. ԱՂԲԱՀԱՎԱՔ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

61. Աղբահավաք սարքավորումների, աղբատարների, աղբի բաքերի և աղբատարների, հորատիպ զուգարանների, ավտոնոմ զուգարանների, ինչպես նաև այդ զուգարանների խցիկի մակերեսների մշակման մեթոդաբանությունը միջոցի լուծույթներով՝ աշխատանքային լուծույթը պատրաստվում է առանձին տարրայում, որից լիցքավորվում են աղբատարի կամ հատուկ փոխադրամիջոցի ցիստեռները, կամ անմիջապես պահանջված վայրում՝ զուգարանում, աղբի բաքերում: Աշխատանքային լուծույթի պատրաստման համար անհրաժեշտ քանակի միջոցը լցնում են համապատասխան քանակի մաքուր, ջրմուղի ջրի մեջ և խառնում են: Խտանյութի և ջրի քանակները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ I-ում:

Աղյուսակ I

Միջոցի աշխատանքային լուծույթների պատրաստման սխեմա

Լուծույթի խտությունը ըստ միջոցի, %	Աշխատանքային լուծույթ պատրաստելու միջոցի և ջրի ծավալը, (լ)					
	10 Լ		100 Լ		1000 Լ	
	Միջոց (լ)	Ջուր(լ)	Միջոց (լ)	Ջուր(լ)	Միջոց (լ)	Ջուր(լ)
1,0	0,1	9,9	1,0	99,0	10	990

1,5	0,15	9,85	1,5	98,5	15	985
3,0	0,3	9,7	3,0	97,0	30	970

Աղյուսակ II-ում ներկայացված է խտանյութի և ջրի քանակը, որն անհրաժեշտ է անմիջապես զուգարանների բաքում, աղբահավաքներում կամ աղբի բաքերում աշխատանքային լուծույթ պատրաստելու համար:

Աղյուսակ II

Միջոցի 3,0 % աշխատանքային լուծույթի պատրաստման սխեմա

Բաքի տարողությունը, լ	Միջոցի ծավալը, լ	Ջրի ծավալը, լ	1,5 % միջոցի լուծույթի ստացված ծավալը, լ
300	0,65	19,85	20,5
250	0,5	16,5	17
200	0,4	13,2	13,6
150	0,3	9,9	10,2
100	0,2	6,6	6,8
50	0,1	3,3	3,4

62. Աշխատանքային լուծույթով բաքի լիցքավորումն իրականացվում է ինչպես ձեռքով, այնպես էլ հատուկ մեքենայի միջոցով: Լիցքավորման կարգը և եղանակը համապատասխանում է տվյալ տեսակի զուգարանի, աղբահավաք սարքավորման սպասարկման կարգին և տեխնիկական փաստաթղթերին:

63. Աղբահավաք բաքերի պարունակության վարակազերծման համար կիրառվում է միջոցի 3,0 % լուծույթ: Բաքի մեջ լցվող լուծույթի քանակը կազմում է թափոններով ամբողջությամբ լցվելու դեպքում աղբահավաք բաքի աշխատանքային ծավալի 1/11 մասը, այսինքն՝ աշխատանքային լուծույթի և թափոնների հարաբերությունը կազմում է

1:10, ազդեցության ժամանակը 30 րոպե է: Աղբահավաք բաքում թափոնների ծավալը չի գերազանցում ընդհանուր ծավալի 75%-ը:

64. Աղբահավաք բաքերի, ավտոնոմ զուգարանների խցիկների մակերեսները մշակում են միջոցի 0,5 % լուծույթով խոզանակի կամ լաթի օգնությամբ, ախտահանման ժամանակը՝ 30 րոպե:

10. ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

65. Սոցիալական ծառայություն մատուցող կազմակերպությունների, հանրակրթական հաստատությունների (ներառյալ մանկական նախադպրոցական, դպրոցական կրթական հաստատությունները), հանրային և վարչական հաստատությունների, արդյունաբերական և քիմիա-դեղագործական արդյունաբերության շուկաների, հանրային սննդի (ռեստորան, սրճարան, ճաշարան և այլն), մթերային առևտրի, դեղատների և այլ տարբեր օբյեկտների ախտահանումն իրականացվում է սույն հրահանգի աղյուսակ 3-ի մանրէային վարակների ռեժիմներով:

66. Տարբեր մակերեսների և սարքավորումների ախտահանումը մարզա-առողջարարական հաստատություններում (ֆիթնես-ակումբ, մարզահամալիր, լողավազան, ակվապարկ), սպասարկման ոլորտի հաստատություններում (բաղնիք, շոգեբաղնիք, վարսավիրանոց, գեղեցկության սրահ և այլն) իրականացվում է սույն հրահանգի աղյուսակ 3-ի սնկային վարակների համար առաջարկվող ռեժիմներին համապատասխան:

67. Մակերեսների, սարքավորումների, գործիքների ախտահանումը բնակչության սպասարկման ոլորտի օբյեկտներում (վարսավիրանոց, գեղեցկության, կոսմետիկական և մերսման սրահներ և այլն), դեղագործական և կենսատեխնոլոգիական արդյունաբերության (ոչ մանրէազերծ դեղամիջոցների արտադրություն՝ C և D դասի մաքրության սենքերում) իրականացվում է մանրէների (սենքերում մակերեսներ, սարքավորումների մակերեսներ) կամ սնկային վարակների (ձեռքերի, ոտքերի ավազաններ) ռեժիմներով՝ սույն հրահանգի աղյուսակ 3-ի ռեժիմներին

համապատասխան: Կոսմետոլոգիական գործիքներն ախտահանվում են սույն հրահանգի աղյուսակ 3-ում ներկայացված ռեժիմներով:

68. Դատաբժշկական փորձաքննության հաստատություններում, դիահերձարաններում, պաթոլոգիաանատոմիական, կրոնական և թաղման արարողակարգեր կազմակերպող կազմակերպություններում մակերեսների և օբյեկտների ախտահանումն իրականացվում է վիրուսային վարակների ռեժիմին համապատասխան (աղյուսակ 3): Դիատար մեքենաներն ախտահանվում են սանիտարական տրանսպորտի ռեժիմով (աղյուսակ 14): Քրեակատարողական հիմնարկներում (բանտ, գաղութ, ճամբար) մակերեսների և օբյեկտների ախտահանումն իրականացվում է սույն հրահանգի աղյուսակ 3-ում ներկայացված տուբերկուլոզի համար առաջարկվող ռեժիմներին համապատասխան:

11. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ, ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՄԱԿՑՎԱԾ ԵՐԿՈՒՄԸ ՄԵԿՈՒՄ

69. Մշակման ենթարկվում են վիրաբուժական, միկրովիրաբուժական, ատամնաբուժական, գինեկոլոգիական, կոսմետոլոգիական գործիքները, բարդ կառուցվածքով սարքավորումների բաղադրիչ մասերը, կոշտ և ճկուն էնդոսկոպները և դրանց կից գործիքները, կուվեզները և դրանց քանդվող բաղադրիչ մասերը, լաբորատոր սպասքը և լաբորատորիայի առարկաները, ատամնատպվածքները և պրոթեզները:

70. Բժշկական նշանակության արտադրատեսակների և բարդ կառուցվածքով սարքերի և սարքավորումների վարակազերծման/մաքրման առաձնացված փուլում միջոցի աշխատանքային լուծույթները չեն կիրառվում երկար ժամանակով թրջելու՝ «բժշկական արտադրատեսակները սառեցնելու» համար:

71. Բժշկական նշանակության իրերն օգտագործելուց հետո ենթակա են ախտահանման, նախամանրէազերծման և մանրէազերծման: Թույլատրվում է ախտահանումը և նախամանրէազերծումը իրականացնել մեկ փուլով: Ախտահանումը, այդ թվում՝ համակցված երկուսը մեկում, իրականացնում են ձեռքային (հատուկ այդ

նպատակով առանձնացված կափարիչով պլաստմասե կամ արծնապատ (առանց ամբողջականության խախտման) տարաներում) կամ մեքենայացված (լվացող-ախտահանող մեքենաներում, ուլտրաձայնային սարքերում) եղանակներով:

72. Օրգանական աղտոտվածության ֆիքսումը կանխարգելելու նպատակով գործիքներն (վիրաբուժական, միկրովիրաբուժական, ատամնաբուժական, գինեկոլոգիական, կոսմետոլոգիական և այլն) օգտագործելուց հետո ընկղմում են աշխատանքային լուծույթի մեջ՝ չթույլատրելով դրանց չորացումը: Մինչ այդ տեսանելի աղտոտվածությունը հեռացնում են գործվածքից պատրաստված անձեռոցիկների օգնությամբ: Օգտագործված անձեռոցիկները տեղադրում են առանձին տարայի մեջ և ախտահանում, այնուհետև օգտահանում սույն հրահանգի աղյուսակ 10-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Գործիքներն ընկղմում են այնպես, որ խոռոչները լցվեն աշխատանքային լուծույթով՝ բացառելով օդային խցանների առաջացումը: Քանդվող մասերն ընկղմում են առանձնացված վիճակում, փականային մասեր ունեցող գործիքներն ընկղմվում են բաց վիճակում, մի քանի աշխատանքային շարժում անելով՝ դժվար հասանելի մասեր լուծույթի ներթափանցումն ապահովելու նպատակով: Տարայի և աշխատանքային լուծույթի ծավալը պետք է հնարավորություն ընձեռի գործիքները լիովին ընկղմելու համար, ապահովելով առնվազն 1 սմ աշխատանքային լուծույթի շերտի հաստությունը գործիքների վրա: Շփման եղանակով ախտահանում թույլատրվում է կիրառել այն բժշկական արտադրատեսակների համար, որոնք անմիջական չեն շփվում պացիենտի հետ և որոնց կառուցվածքային առանձնահատկությունները թույլ չեն տալիս իրականացնել մշակում ընկղմման եղանակով: Ախտահանման պահաժամից հետո արտադրատեսակները հանում են տարայի միջից և լվանում ախտահանիչ միջոցի մնացորդներից հոսող խմելու ջրով առնվազն 3 րոպե, լվանալով խողովակները ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով և թույլ չտալով բացթողնված ջուրը լցվի լվացվող արտադրատեսակներով տարայի մեջ: Բժշկական արտադրատեսակների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 12-ում:

Բժշկական արտադրատեսակների (վիրաբուժական, միկրովիրաբուժական, ատամնաբուժական, գինեկոլոգիական գործիքներ, ապարատների բարդ-կառուցվածքային տարրեր (այդ թվում էնդոսկոպներին կից գործիքներ), լաբորատոր ամանեղեն և լաբորատոր առարկաներ, ատամնաբուժական դրոշմվածքներ և կիսապատրաստվածքներ) միջոցի լուծույթներով ախտահանման ռեժիմները

Ձեռքով մշակման եղանակ

Մշակվող օբյեկտի նյութը, աղտոտվածության աստիճանը	Վարակի էթիոլոգիան					
	Մանրէային (տուբերկուլոզից բացի, վիրուսային, սնկային (կանդիդոզներ)		սնկային (դերմատոֆիտիաներ)		Տուբերկուլոզ*	
	Աշխատանքային լուծույթի խտությունը ըստ նյութի, (%) -ազդեցության պահաժամը (րոպե)					
	%	րոպե	%	րոպե	%	րոպե
1. Բժշկական արտադրատեսակներ (վիրաբուժական, միկրովիրաբուժական, ատամնաբուժական, գինեկոլոգիականգործիքներ)						
2. Լաբորատոր սպասք և լաբորատոր այլ առարկաներ						
3. Ատամնատպվածք և կիսապատրաստվածքներ						
4. Ապարատների և սարքավորումների բարդ-կառուցվածքային տարրեր, որոնք ունեն քանդվող մասեր (այդ թվում էնդոսկոպներին կից գործիքներ)						
Մշակման եղանակը՝ ընկղմում						
1. Հարթ, ոչ ծակոտկեն նյութերից (մետաղյա, ապակե, պոլիմերային նյութերից, պլաստիկե) առարկաներ 2. Պարզ կառուցվածքի առարկաներ առանց խողովակների, խոռոչների, ծակոտկեն մակերևութով,	0,5	60	1,0	60	5,0	60
	1,0	30				
		2,0	15	2,0	30	6,0

ինչպես նաև փակվող մասերով						
1.Ծակոտկեն նյութերից առարկաներ (ռետինե և այլ պոլիմերային նյութերից), որոնց որակյալ մաքրումն անհնար է կամ կասկածելի 2.Բարդ-կառուցվածքային, խողովակներ և խողովակներ, ծակոտկեն մակերեսներ, փակվող մասեր ունեցող առարկաներ	0,5	90	2,0	60	7,0	60
	1,0	60				
	2,0	30	3,0	30	8,0	30

Նշում. * –Աշխատանքային լուծույթների խտությունն ու ազդեցության ժամանակը, թեստավորված է *Mycobacterium terrae*-ի վրա

¹ –Ռոտացիոն գործիքներ, կոշտիամածուկվածքային բորեր և ավաստե հղկող դիսկեր, հայելներ, արմատի ասեղներ, աքցան, գլադիկա, էքսկավատոր, ավաստե դրիլբորերի գլխիկներ, նշտար, ունելի, մկրատ, սեղմակ և ընկղմման եղանակով մշակվող այլ օբյեկտներ:

² –Ատամնաբուժական արտատպվածքներ ալգինատային, սիլիկոնային նյութերից, պլիեթերային խեժից, ատամնապրոթեզային կիսահումքեր մետաղից, կերամիկայից, պլաստմասից և այլ նյութերից, արտիկուլատորներ:

³ –Այդ թվում թոքերի արհեստական շնչառության և նարկոզա-շնչառական սարքերի տարրեր (ներառյալ շնչառական ուրվագծերը, պարկերը, շնչադիմակները, խոնավացուցիչները և այլն) նախամանրէազերծման և մանրէազերծման փուլերից առաջ:

73. Բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծումն իրականացվում է միջոցի աշխատանքային լուծույթներով դրանց ախտահանումից հետո սույն հրահանգի աղյուսակ 13-ում և 1, 2 սխեմաներում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

74. Ինվազիվ միջամտությունից անմիջապես հետո, ախտահանումից կամ մանրէազերծումից առաջ, իրականացվում է գործիքների մանրակրկիտ մաքրում՝ ձեռքային և մեքենայացված եղանակներով: Ամբողջությամբ չմաքրված գործիքը չի ախտահանվի և մանրէազերծվի նույնիսկ երկար ազդեցության պահածամով: Գործիքների մաքրմամբ զբաղվող բուժանձնակազմի վարակման կանխարգելման նպատակով ձեռքային եղանակով նախամանրէազերծման մաքրում իրականացնում են նախնական ախտահանումից հետո կամ ախտահանման հետ համակցված:

75. Կիրառումից անմիջապես հետո, գործիքներն ամբողջությամբ ընկղմվում են միջոցի լուծույթի մեջ, պահում են անհրաժեշտ ազդեցության ժամանակը և դրանից հետո սկսում են նախամանրէազերծում, այդ թվում ախտահանման հետ համակցված:

76. Գործիքների տեսանելի մակերեսները մաքրում են ձեռքային եղանակով: Կառուցվածքային բարդ գործիքները (առաջին հերթին միկրովիրաբուժական, ստոմատոլոգիական), ինչպես նաև խոռոչներով, խողովակներով, ծակոտկեն մակերեսով առարկաները մաքրում են ուլտրաձայնային մեթոդով: Բարակ խողովակների, անցքերի, արտադրատեսակի դժվարհասանելի մասեր լուծույթի լավ թափանցման համար իրականացվում է մի քանի աշխատանքային շարժում: Թրջումից հետո նույն լուծույթի մեջ իրականացնում են արտադրատեսակի մաքրում օգնող հարմարանքներով: Հաջորդաբար պարզաջրում են արտադրատեսակները՝ սկզբում խմելու ջրով, այնուհետև՝ թորած: Եզրափակիչ ախտահանումից առաջ գործիքները չորացնում են:

77. Արտադրատեսակների նախամանրէազերծման որակը գնահատվում է ազոպիրամային կամ ամիդոպիրինային փորձ դնելով՝ արյան մնացորդային քանակության առկայության համար, ինչպես նաև ֆենոլֆթալեինային փորձ դնելով՝ լվացող միջոցների հիմնային բաղադրիչների մնացորդային քանակության առկայության համար (միայն այն միջոցների կիրառման դեպքում, որոնց աշխատանքային լուծույթների pH-ը 8,5-ից բարձր է): Վերահսկման ենթակա է միաժամանակ մշակվող նույնանուն արտադրատեսակների 1%-ը (սակայն 3 արտադրատեսակից ոչ պակաս): Արյան մնացորդների հայտնաբերման ժամանակ (դրական փորձ) արտադրատեսակների ամբողջ խումբը, որից վերցվել են արտադրատեսակներ հսկման համար, ենթակա է կրկնակի մշակման մինչև բացասական պատասխան ստանալը:

78. Ատամնաբուժական արտատպվածքները և ատամնապրոթեզային կիսահումքերը նախապես ջրով լվանում են (օգտագործելով մաշկի անհատական պաշտպանության միջոց՝ ռետինե ձեռնոց, գոգնոց), ախտահանում դրանք միջոցի լուծույթի մեջ ընկղմման եղանակով: Ախտահանումից հետո արտատպվածքները և ատամնապրոթեզային կիսահումքերը լվանում են հոսող ջրով յուրաքանչյուր կողմից 30-

ական վայրկյան կամ ընկղմում ջրով լի տարայի մեջ 3 րոպե, որից հետո չորացվում են օդում:

79. Ատամնաբուժական արտածող համակարգերն ախտահանում են, օգտագործելով միջոցի աշխատանքային լուծույթ 2,0%, 3,0% խտությամբ 1 և ծավալով, այն բաց թողնելով սարքի արտածող համակարգով 2 րոպեի ընթացքում: Այնուհետև թողնում են նրա մեջ ազդեցության համար 2,0% լուծույթը 30 րոպեով, 3,0% լուծույթը 20 րոպեով (այդ ընթացքում արտածող համակարգը չի օգտագործվում): Գործողությունն իրականացնում են օրական 1-2 անգամ, այդ թվում աշխատանքային հերթափոխի ավարտից հետո: Արտածող համակարգերի ծայրադիրները մաքրում և ախտահանում են պացիենտի մոտ կիրառումից հետո միջոցի աշխատանքային լուծույթի մեջ ընկղմման եղանակով՝ տուբերկուլոզի միկոբակտերիայի նկատմամբ արդյունավետ ռեժիմին համապատասխան (աղյուսակ 12): Մասերի և արտածող համակարգի վերջնական լվացումը իրականացվում է հոսող խմելու ջրով: Թքամանները լցնում են միջոցի լուծույթով, պահում են անհրաժեշտ ազդեցության ժամանակը տուբերկուլոզի միկոբակտերիայի նկատմամբ արդյունավետ ռեժիմին համապատասխան (աղյուսակ 9):

Աղյուսակ 13

Բժշկական արտադրատեսակների¹ նախամանրէագերծման ռեժիմներ միջոցի

լուծույթով

Ձեռքային և մեքենայացված եղանակներ

Նյութը, որից պատրաստված է մշակվող օբյեկտը և աղտոտվածության աստիճանը	Մշակման եղանակը					
	Ձեռքային	Մեքենայացված ¹				
		Ուձ վաննայի (կՀg) հաճախականությունը, մշակման ջերմաստիճանը (° C), աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի (%), ազդեցության ժամանակը (ր)				
		20±2կհց ³	35±2կհց ³		45±2կհց ³	
		18-22°C 35-40°C	18-22°C	35-40°C	18-22°C	35-40°C
		Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի (%), ազդեցության ժամանակը (րոպե)				

	%	րոպ ե	%	րոպ ե	%	րոպ ե	%	րոպ ե	%	րոպ ե	%	րոպ ե
1. Վիրաբուժական, միկրովիրաբուժական, ստոմատոլոգիական ¹ , գինեկոլոգիական գործիքներ: 2. Լաբորատոր սպասք և լաբորատոր այլ պարագաներ 3. Ատամնապրոթեզներ, արտատպվածքներ 4. Քանդման ենթակա բարդ կառուցվածքային սարքերի և գործիքների տարրեր Մշակման եղանակը՝ ընկղմում												
1.Հարթ, ոչ ծակոտկեն նյութերից (մետաղյա, ապակե, պոլիմերային նյութերից, պլաստիկե) առարկաներ 2.Պարզ կառուցվածքի առարկաներ առանց խուղակների, խոռոչների, ծակոտկեն մակերևույթով, ինչպես նաև փակվող մասերով	0,2 5	5	0,2 5	5	0,2 5	5	0,2 5	3	0,2 5	3	0,2 5	3
	0,5	5										
	1,0	5	0,5	5	0,5	5	0,5	3	1,5	3	0,5	3
	2,0	5										
	3,0	5	1,0	5	1,0	5	1,0	3	1,0	3	1,0	3
	5,0	5										
	6,0	5	2,0	5	2,0	5	2,0	3	2,0	3	2,0	3
1.Ծակոտկեն նյութերից առարկաներ (ռետինե և այլ պոլիմերային նյութերից), որոնց որակյալ մաքրումն անհնար է կամ կասկածելի 2.Բարդ-կառուցվածքային, խուղակներ և խոռոչներ, ծակոտկեն մակերեսներ, փակվող մասեր	0,2 5	10	0,2 5	10	0,2 5	7	0,2 5	5	0,2 5	5	0,2 5	5
	0,5	10										
	1,0	10	0,5	10	0,5	7	0,5	5	0,5	5	0,5	5
	2,0	10										
	3,0	10	1,0	10	1,0	7	1,0	5	1,0	5	1,0	5
	7,0	10										
	8,0	10	2,0	10	2,0	7	2,0	5	2,0	5	2,0	5

ունեցող առարկաներ												
----------------------	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

Նշում. ¹ Ուձ մեթոդով մշակում են այն առարկաները, որը թույլատրում է արտադրողը:

² Մաքրման և նախամանրէագերծման նպատակով կիրառվում է 0,25 %

³ Կիրառվում է 20±2 կՀց հաճախականությունը միայն բժշկական նշանակության արտադրատեսակների նախնական մաքրման համար:

⁴ Մշակման ընթացքում ջերմաստիճանը պահպանվում է ուլտրաձայնային վաննայում:

Բժշկական արտադրատեսակների՝ վիրաբուժական, միկրովիրաբուժական, ատամնաբուժական, գինեկոլոգիական գործիքների, կառուցվածքային բարդ սարքերի և սարքավորումների, լաբորատոր սպասքի ախտահանում՝ համակցված նախամանրէագերծման հետ միջոցի լուծույթներով

Ձեռքային (սխեմա 1) և մեքենայացված (սխեմա 2) եղանակներ

Սխեմա 1

Ձեռքային եղանակ



ԱՌԱՋԻՆ ՓՈԻԼ

Ախտահանում

Բժշկական արտադրատեսակների ընկղմում աշխատանքային լուծույթով տարայի մեջ դրանց ամբողջական ընկղմմամբ մշակման ձեռքային եղանակի ժամանակ և դրանով պոմպի կամ էլեկտրաարտածծիչի միջոցով խոռոչները և խողովակները լցնելով

Հարթ, ոչ ծակոտկեն նյութերից պարզ կառուցվածքի առարկաներ				Ծակոտկեն նյութից, բարդ կառուցվածքի, խոռոչներով, խողովակներով, ինչպես նաև փականային մասերով առարկաներ			
Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ	Վարակի էթիոլոգիան			Աշխատանքային լուծույթի խտությունն	Վարակի էթիոլոգիան		
	Մանրէային (տուբերկուլոզից բացի)	Սնկային (դերմատոֆիտիա),	տուբերկուլոզ*		Մանրէային (տուբերկուլոզից բացի)	Սնկային (դերմատոֆիտիա)	տուբերկուլոզ*

միջոցի (%)	վիրուսային, սնկային (կանդիդոզ)			ըստ միջոցի (%)	վիրուսային, սնկային (կանդիդոզ)		
	Ազդեցության ժամանակը (րոպե)				Ազդեցության ժամանակը (րոպե)		
0,5	60	-	-	0,5	90	-	-
1,0	30	60	-	1,0	60	-	-
2,0	15	30	-	2,0	30	60	-
3,0	-	-	-	3,0	-	30	-
5,0	-	-	60	7,0	-	-	60
6,0	-	-	30	8,0	-	-	30

Նշում.¹ Աշխատանքային լուծույթի խտությունն ու ազդեցության ժամանակը, որը կիրառվում է տուբերկուլոզի ժամանակ: Թեստավորված է *Mycobacterium terrae*-ի վրա:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Նախամանրէագերծում

Պահպանում լուծույթում, որի մեջ ախտահանվել է և մանրակրկիտ մաքրում հատուկ հարմարանքներով՝ մինչև աղտոտվածության ամբողջությամբ հեռացումը

5 րոպե



10 րոպե



ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Խմելու ջրով արտադրատեսակի վաացում/ընկղմում, խոռոչների և խողովակների վաացում ներարկիչի կամ էլեկտրաարտածծիչի օգնությամբ մինչև աշխատանքային լուծույթի լրիվ վերացումը առնվազն 3 րոպեի ընթացքում:



ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Պարզաջրում թորած ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով), մինչև խմելու ջրի մնացորդները վերանան



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՓՈԽԼ

Ցանկացած հասանելի մեթոդով չորացում (բժշկական արտադրատեսակից ամբողջությամբ ջրի հեռացում):

Սխեմա 2

Մեքենայացված¹ եղանակ¹



ԱՌԱՋԻՆ ՓՈԽԼ

Ուտրաձայնային մշակում^{2,3}

Բժշկական արտադրատեսակների մշակում ուտրաձայնային սարքերում (ՈԻՁՍ)¹

Կիրառման ժամանակ մշակման մեքենայացված եղանակ՝ կիրառելով դրանք ամբողջությամբ աշխատանքային լուծույթի մեջ ընկղմելով և լցնելով խոռոչներն ու խողովակները

Պարզ կառուցվածքի, ոչ ծակոտկեն նյութից հարթ առարկաներ				Բարդ կառուցվածքի, խոռոչներով ծակոտկեն նյութից առարկաներ, փականային մասեր:			
Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	Վարակի էթիոլոգիան			Աշխատանքային լուծույթի խտությունը ըստ միջոցի, %	Վարակի ծագումնաբանությունը		
	Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի), վիրուսային, սնկային (կանդիդոզներ)	Մնկային (դերմատոֆիտիաներ),	Տուբերկուլոզ ⁴		Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի), վիրուսային, սնկային (կանդիդոզներ)	Մնկային (դերմատոֆիտիաներ)	տուբերկուլոզ*
	Ազդեցության ժամանակ, րոպե				Ազդեցության ժամանակ, րոպե		
1,0	30	-	-	2,0	30	-	-
2,0	15	30	-	3,0	-	30	-
6,0	-	-	30	8,0	-	-	30

Նշում. ¹ Ուձ մեթոդով մշակում են այն առարկաները, որը թույլատրում է արտադրողը:

² Կիրառվում է 35 ± 2 -ից մինչև 45 ± 2 կՀց հաճախականությունը:

³ Կիրառվում է $18-22^{\circ}\text{C}$ –ից մինչև $35-40^{\circ}\text{C}$

⁴ Աշխատանքային լուծույթի խտությունն ու ազդեցության ժամանակը, որը կիրառվում է տուբերկուլոզի ժամանակ: Թեստավորված է *Mycobacterium terrae*-ի վրա:



ԵՐԿՐՈՐԴ ՓՈԽԼ

Խմելու ջրով արտադրատեսակի վացում/ընկղմում, խոռոչների և խողովակների վացում ներարկիչի կամ էլեկտրաարտածծիչի օգնությամբ մինչ աշխատանքային լուծույթի լրիվ վերացումը, ուլտրաձայնային սարքից դուրս, 3 րոպեի ընթացքում:



ԵՐՐՈՐԴ ՓՈԽԼ

Պարզաջրում թորած ջրով (խողովակները վացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով), ուլտրաձայնային սարքից դուրս, մինչև խմելու ջրի մնացորդները վերանան:



ՉՈՐՐՈՐԴ ՓՈԽԼ

Ցանկացած հասանելի մեթոդով չորացում (բժշկական արտադրատեսակից ամբողջությամբ ջրի հեռացում):

80. Կուլեզի և նրա պարագաների մակերեսները տարբեր վարակների ժամանակ մանրակրկիտ շփում են միջոցի լուծույթով թրջված լաթով՝ միջոցի աշխատանքային լուծույթի 100 մլ/մ^2 մշակվող մակերեսի ծախսի նորմայով: Ախտահանումից հետո կուլեզի մակերեսները շփում են կրկնակի՝ ջրով առատ թրջված մանրէազերծ գործվածքային անձեռոցիկներով, իսկ այնուհետև մանրէազերծ գործվածքով (օրինակ, բարուրաշորով) շփելով չորացնում են: Ախտահանիչ պահաժամից հետո կուլեզներն օդափոխվում են առնվազն 15 րոպե: Մնացած մասերը (խոնավացուցիչի ռեզերվուար, մետաղական ալեմարիչ, օդակլանիչ փող, ռետինե խողովակ, թթվածնի

նախապատրաստման հանգույց) մշակում են, հնարավորինս քանդելով, մաքրում են և ամբողջությամբ ընկղմում համապատասխան աշխատանքային լուծույթով տարայի մեջ: Ախտահանումից հետո բոլոր պարագաները լվանում են մանրէազերծ ջրի մեջ կրկնակի ընկղմման եղանակով (յուրաքանչյուրը 3 րոպե), ինչպես նաև մղելով ջուրը փողերի և ռետինե խողովակների միջով: Պարագաները նույնպես չորացնում են մանրէազերծ գործվածքային անձեռոցիկներով: Կուլեզների մշակման ժամանակ հաշվի է առնվում կուլեզի արտադրողի առաջարկները: Կուլեզների մակերեսների ախտահանումն իրականացվում է առանձին սենքում շփման եղանակով՝ սույն հրահանգի աղյուսակ 14-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Կուլեզների քանդվող մասերի դետալների ախտահանումն իրականացվում է ընկղմման եղանակով մշակման ռեժիմներով. ախտահանումը՝ սույն հրահանգի աղյուսակ 14-ին, նախամանրէազերծումը՝ աղյուսակ 15, ախտահանումը համակցված նախամանրէազերծման հետ՝ սխեմա 3-ին (ձեռքային եղանակ), սխեմա 4-ին (մեքենայացված եղանակ) համապատասխան:

Աղյուսակ 14

Կուլեզի և նրա պարագաների մակերեսների ախտահանման ռեժիմները միջոցի լուծույթներով
Ձեռքային եղանակ

Վարակի էթիոլոգիան	Վարակազերծվող օբյեկտները		
	Կուլեզների քանդվող մասերի դետալներ		Կուլեզների մակերեսներ
	Պարզ կառուցվածքի, ոչ ծակոտկեն նյութից հարթ առարկաներ	Բարդ կառուցվածքի, խոռոչներով ծակոտկեն նյութից առարկաներ, փականային մասեր:	

	Աշխատանքային լուծույթի խտությունը ըստ նյութի, %- ազդեցության պահաժամը, րոպե					
	%	րոպե	%	րոպե	%	րոպե
Մանրէային (բացի տուբերկուլոզից), վիրուսային, սնկային (կանդիդոզներ)	0,5	60	0,5	90	0,25	60
	1,0	30	1,0	60	0,50	30
	2,0	15	2,0	30	1,0	15
	-	-	-	-	2,0	10
Սնկային (դերմատոֆիտիաներ)	1,0	60	2,0	60	0,5	60
	2,0	30	3,0	30	1,0	30
Տուբերկուլոզ ¹	5,0	60	7,0	60	4,0	60
	6,0	30	8,0	30	5,0	30

Աղյուսակ 15

Կուլվեզի և նրա պարագաների մակերեսների նախամանրէազերծման ռեժիմները

միջոցի լուծույթներով

Ձեռքային և մեքենայացված եղանակ

Մշակվող օբյեկտի նյութը, աղտոտվածության աստիճանը	Մշակման եղանակը									
	Ձեռքով, ընկղմում		Մեքենայացված							
			Ուձ վաննայի (կ<ց) հաճախականությունը, մշակման ջերմաստիճանը (° C), աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի (%), ազդեցության ժամանակը (ր)							
			35±2կհց				45±2կհց			
	18-22°C		35-40°C		18-22°C		35-40°C			
	Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի (%), ազդեցության ժամանակը (րոպե)									
	%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե
Հարթ, ոչ ծակոտկեն նյութերից (մետաղ, ապակի, պոլիմերային նյութեր, պլաստիկ) առարկաներ: Պարզ կառուցվածքի,	0,25	5	0,25	10	0,25	3	0,25	3	0,25	3
	0,5	5								
	1,0	5	0,5	10	0,5	3	0,5	3	0,5	3
	2,0	5								

առանց խոռոչների, ծակոտկեն մակերեսների, ինչպես նաև փականային մասերի	3,0	5	1,0	10	1,0	3	1,0	3	1,0	3
	5,0	5								
	6,0	5	2,0	10	2,0	3	2,0	3	2,0	3
Ծակոտկեն նյութից (ռետին և այլ պոլիմերային նյութեր) առարկաներ, որոնց որակյալ մաքրումը հնարավոր չէ կամ կասկածելի է: Բարդ կառուցվածքի, խոռոչներով ծակոտկեն մակերեսներ, ինչպես նաև փականային մաս:	0,25	10	0,25	10	0,25	7	0,25	5	0,25	5
	0,5	10								
	1,0	10	0,5	10	0,5	7	0,5	5	0,5	5
	2,0	10								
	3,0	10	1,0	10	1,0	7	1,0	5	1,0	5
	7,0	10								
	8,0	10	2,0	10	2,0	7	2,0	5	2,0	5

Նշում. ¹ Ուձ մեթոդով մշակում են այն առարկաները, որը թույլատրում է արտադրողը:

² Մաքրման և նախամանրէագերծման նպատակով կիրառվում է 0,25 %

³ Կիրառվում է 20±2 կՀց հաճախականությունը միայն բժշկական նշանակության արտադրատեսակների նախնական մաքրման համար:

⁴ Մշակման ընթացքում ջերմաստիճանը պահպանվում է ուլտրաձայնային վաննայում:

Կուլեզի և նրա պարագաների մակերեսների ախտահանումը նախամանրէագերծման

հետ համակցված մեկ փուլում կիրառելու ռեժիմները միջոցի լուծույթներով:

Ձեռքային (սխեմա 3) և մեքենայացված (սխեմա 4) եղանակներ

Սխեմա 3

Ձեռքային եղանակ

ԱՌԱՋԻՆ ՓՈԽԼ



Ախտահանում

Կուլեզի և նրա պարագաների մշակում աշխատանքային լուծույթի մեջ ամբողջությամբ

ընկղմելով և լուծույթով խոռոչներն ու խողովակները լցնելով ներարկիչի կամ

էլեկտրաարտածիչի միջոցով

Պարզ կառուցվածքի, ոչ ծակոտկեն նյութից հարթ առարկաներ				Բարդ կառուցվածքի, խոռոչներով ծակոտկեն նյութից առարկաներ, փականային մասեր:			
Լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	Վարակի էթիոլոգիան			Լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	Վարակի էթիոլոգիան		
	Մանրէային (բացի տուբերկուլոզից), վիրուսային	Սնկային (դերմատոֆիտ իաներ)	տուբերկուլոզ*		Մանրէային (բացի տուբերկուլոզից), վիրուսային	Սնկային (դերմատոֆիտ իաներ)	տուբերկուլոզ*
	Ազդեցության ժամանակը (րոպե)				Ազդեցության ժամանակը (րոպե)		
0,5	60	-	-	0,5	90	-	-
1,0	30	60	-	1,0	60	-	-
2,0	15	30	-	2,0	30	60	-
3,0	-	-	-	3,0	-	30	-
5,0	-	-	60	7,0	-	-	60
6,0	-	-	30	8,0	-	-	30

Նշում.*- ¹ Աշխատանքային լուծույթի խտությունն ու ազդեցության ժամանակը, որը կիրառվում է տուբերկուլոզի ժամանակ: Թեստավորված է *Mycobacterium terrae*-ի վրա:



ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Նախամանրէազերծում

Պահպանում լուծույթում, որի մեջ ախտահանվել է և մանրակրկիտ մաքրում հատուկ հարմարանքներով (թույլ չտալով աէրոզոլների առաջացում)՝ մինչև ադոտոտվածության ամբողջությամբ հեռացումը



5

րոպե

10 րոպե





ԵՐՐՈՐԴ ՓՈԽԼ

Խմելու ջրով արտադրատեսակի լվացում/ընկղմում, խոռոչների և խողովակների լվացում ներարկիչի կամ էլեկտրաարտածիչի օգնությամբ մինչ աշխատանքային լուծույթի լրիվ վերացումը, 3 րոպեի ընթացքում:



ՉՈՐՐՈՐԴ ՓՈԽԼ

Պարզաջրում թորած ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով), առնվազն 3 րոպե, մինչև խմելու ջրի մնացորդները վերանան



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՓՈԽԼ

Ցանկացած հասանելի մեթոդով չորացում (բժշկական արտադրատեսակից ամբողջությամբ ջրի հեռացում):

Սխեմա 4

Մեքենայացված եղանակ¹



ԱՌԱՋԻՆ ՓՈԽԼ

Ուլտրաձայնային մշակում^{2,3}

Կուլեզի և նրա պարագաների մշակում ուլտրաձայնային սարքերում (ՈՒՁՍ)¹
կիրառման ժամանակ մշակման մեքենայացված եղանակ՝ կիրառելով դրանք ամբողջությամբ աշխատանքային լուծույթի մեջ ընկղմելով և լցնելով խոռոչներն ու խողովակները: Ուլտրաձայնային մշակումն իրականացվում է սարքի կիրառման հրահանգներին համապատասխան:

Պարզ կառուցվածքի, ոչ ծակոտկեն նյութից հարթ առարկաներ				Բարդ կառուցվածքի, խոռոչներով ծակոտկեն նյութից առարկաներ, փականային մասեր:			
Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	Վարակի էթիոլոգիան			Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	Վարակի էթիոլոգիան		
	Մանրէային (բացի տուբերկուլոզից), վիրուսային	Սնկային (դերմատոֆիտիաներ)	տուբերկուլոզ*		Մանրէային (բացի տուբերկուլոզից), վիրուսային	Սնկային(դերմատոֆիտիաներ)	տուբերկուլոզ*
	Ազդեցության ժամանակը (ր)				Ազդեցության ժամանակը (ր)		
1,0	30	-	-	2,0	30	-	-
2,0	15	30	-	3,0	-	30	-
6,0	-	-	30	8,0	-	-	30

Նշում. ¹ ՈւՁ մեթոդով մշակում են այն առարկաները, որը թույլատրում է արտադրողը:

² Կիրառվում է 35±2-ից մինչև 45±2 կՀց հաճախականությունը:

³ Կիրառվում է 18-22° C –ից մինչև 35-40° C

⁴ Աշխատանքային լուծույթի խտությունն ու ազդեցության ժամանակը, որը կիրառվում է տուբերկուլոզի ժամանակ: Թեստավորված է *Mycobacterium terrae*-ի վրա:



ԵՐԿՐՈՐԴ ՓՈԽԼ

Խմելու ջրով արտադրատեսակի վաացում/ընկղմում, խոռոչների և խողովակների վաացում ներարկիչի կամ էլեկտրաարտածծիչի օգնությամբ մինչ աշխատանքային լուծույթի լրիվ վերացումը, ուլտրաձայնային սարքից դուրս, 3 րոպեի ընթացքում:



ԵՐՐՈՐԴ ՓՈԽԼ

Պարզաջրում թորած ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով), ուլտրաձայնային սարքից դուրս, մինչև խմելու ջրի մնացորդները վերանան:



ՉՈՐՐՈՐԴ ՓՈԽԼ

Ցանկացած հասանելի մեթոդով չորացում (բժշկական արտադրատեսակից ամբողջությամբ ջրի հեռացում):

81. Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախնական մաքրում. Մշակման մեթոդաբանություն՝ էնդոսկոպների և դրանց կից գործիքների մշակումը իրականացվում է առանձին: Սարքավորման մշակումը սկսում են անմիջապես էնդոսկոպիական միջամտություն իրականացնելուց հետո, աշխատելով թույլ չտալ կենսաբանական աղտոտվածությունների չորացում: Տեսանելի աղտոտվածությունները էնդոսկոպի արտաքին մակերեսից, այդ թվում օբյեկտիվից, հեռացնում են միջոցի լուծույթով թրջված գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով: Էնդոսկոպի աշխատանքային մասը շփում են կառավարման բլոկից դեպի դիստալ հատված ուղղությամբ: Էնդոսկոպի խողովակները լվանում են միջոցի աշխատանքային լուծույթով՝ ճկուն էնդոսկոպի դիստալ հատվածը ընկղմելով լուծույթով տարայի մեջ: Արտադրատեսակը լվանում են խմելու ջրով: Նախնական մաքրումից հետո էնդոսկոպն անջատում են սնուցման աղբյուրից և էնդոսկոպիական արտածիչից, տեղափոխում են մշակման սենք՝ պահպանելով հակահամաճարակաբանական միջոցառումները (փակ վիճակով տեփուրի վրա կամ կոնտեյնների մեջ): Էնդոսկոպին կից գործիքներն ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ: Արտադրատեսակները մաքրում են միջոցի լուծույթի մեջ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկներով, թույլ չտալով ցայտերի առաջացում: Արտադրատեսակների խողովակները լվանում են ներարկիչով կամ այլ հատուկ հարմարանքներով: Մաքրումից հետո էնդոսկոպների կից գործիքները լվանում են խմելու ջրով: Ճկուն և կոշտ

էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախնական մաքրման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի սխեմա 5-ում:

82. Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախամանրէազերծում՝ ախտահանման հետ չհամակցված: Մշակման մեթոդաբանություն՝ էնդոսկոպների և դրանց կից գործիքների մշակումն իրականացվում է առանձին: Էնդոսկոպը և դրան կից պարագաներն ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ, ապահովելով ամբողջական շփում արտադրատեսակների մակերեսների հետ, և հարկադրաբար լցնում են բոլոր խողովակները օգնող հարմարանքների միջոցով: Խողովակներից օդի հեռացման համար օգտագործում են ներարկիչ (պոմպ): Պահում են ազդեցության անհրաժեշտ ժամանակը և սկսում դրանց մաքրումը: Էնդոսկոպի և դրան կից պարագաների արտաքին մակերեսը մաքրում են լուծույթի մակերեսի վրա գործվածքային (թանգիվե) անձեռոցիկներով, թույլ չտալով ցայտում: Էնդոսկոպի գործիքների և պարագաների մաքրումը իրականացնում են՝ օգտագործելով հատուկ խոզանակներ: Իրականացնում են խողովակների մեխանիկական մաքրում (էնդոսկոպի արտադրողի առաջարկներին համապատասխան), օգտագործելով հատուկ խոզանակներ, մետաղալարե մաքրիչներ, որոնք համապատասխանում են խողովակների տրամագծին ու երկարությանը: Միջոցի աշխատանքային լուծույթներով էնդոսկոպի խողովակների վացման համար օգտագործում են ներարկիչներ կամ այլ հարմարանքներ այդ նպատակների համար, որոնք էնդոսկոպի հետ լինում են նույն լրակազմում: Մեխանիկական մաքրումից հետո էնդոսկոպը և դրան կից պարագաները տեղափոխում են խմելու ջրով տարաների մեջ և լվանում միջոցի մնացորդներից: Էնդոսկոպի, դրա պարագաների վացումը իրականացնում են հաջորդաբար՝ սկզբում խմելու ջրով, այնուհետև՝ թորած:

83. Բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծման (եզրափակիչ) մաքրման որակի հսկողությունը: Արտադրատեսակների նախամանրէազերծման որակը գնահատում են ազոպիրամային կամ ամիդոպիրինային փորձերի միջոցով՝ արյան մնացորդային քանակությունների որոշման համար, ինչպես նաև ֆենոլֆտալեինային փորձ դնելու միջոցով՝ վացող միջոցների հիմնային բաղադրիչների մնացորդային քանակությունների առկայության համար (միայն այն միջոցների կիրառման դեպքում,

որոնց աշխատանքային լուծույթների pH-ը բարձր է 8,5-ից): Հսկման ենթակա է միաժամանակ մշակված նույնանուն արտադրատեսակների 1%-ը (սակայն 3 արտադրատեսակից ոչ պակաս): Արյան մնացորդների հայտնաբերման ժամանակ (դրական փորձ) արտադրատեսակների ամբողջ խումբը, որից վերցրել են արտադրատեսակներ հսկման համար, ենթակա է կրկնակի մշակման, մինչև բացասական արդյունքի ստացումը:

Նախամանրէազերծման՝ ախտահանման հետ չհամակցված ռեժիմները ներկայացված են սխեմա 5-ում:

Սխեմա 5

Միջոցի լուծույթներով ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախնական մաքրում, նախամանրէազերծում (վերջնական) մաքրում՝ ախտահանման հետ չհամակցված

Ձեռքային և մեքենայացված եղանակներ



ԱՌԱՋԻՆ ՓՈԻԼ

Արտադրատեսակների թրջում՝ դրանք ամբողջությամբ աշխատանքային լուծույթի մեջ ընկղմելով և խոռոչներն ու խողովակները լցնելով

Մշակման եղանակը		
Ձեռքային		Մեքենայացված՝
Մշակվող օբյեկտը Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի (%), ազդեցության ժամանակը, րոպե		Մշակվող օբյեկտը ՈՒՁ վաննայի (կՀց) հաճախականությունը, մշակման ջերմաստիճանը ($^{\circ}\text{C}$) Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի (%), ազդեցության ժամանակը, րոպե
	Ճկուն էնդոսկոպներ	Ճկուն և կոշտ էնդոսկոպներ և դրանց կից գործիքներ

Կոշտ էնդոսկոպնե ր		էնդոսկոպերի ն կից գործիքներ									
				35±2 կՀg				45±2 կՀg			
				18-22 ⁰ C		35-40 ⁰ C		18-22 ⁰ C		35-40 ⁰ C	
Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի (%), ազդեցության ժամանակը րոպե											
%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե
0,25	5	0,25	10	0,2	7	0,2	5	0,2	5	0,2	5
0,5	5	0,5	10								
1,0	5	1,0	10	0,5	7	0,5	5	0,5	5	0,5	5
2,0	5	2,0	10								
3,0	5	3,0	10	1,0	7	1,0	5	1,0	5	1,0	5
5,0	5	5,0	10								
6,0	5	6,0	10	2,0	7	2,0	5	2,0	5	2,0	5
7,0	5	7,0	10								
8,0	5	8,0	10								



ԵՐԿՐՈՐԴ ՓՈԻԼ ³

Յուրաքանչյուր արտադրատեսակի լվացում նույն լուծույթում, որի մեջ իրականացվել է
թրջումը, լուծույթի առնվազն 18° C-ում

Ճկուն էնդոսկոպի բաժիններ	Մշակման ժամանակ , րոպե	Կոշտ էնդոսկոպի բաժիններ	Մշակման ժամանակ, րոպե
Գործիքային խողովակը մաքրում են գործիքային խողովակի մաքրման խոզանակով	2	Յուրաքանչյուր դետալ լվանում են խոզանակով կամ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով:	2
Ներքին խողովակները լվանում են ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով	3	Խողովակները լվանում են ներարկիչի օգնությամբ:	2
Արտաքին մակերեսը լվանում են գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով	1		
Էնդոսկոպներին կից գործիքների մակերեսներ			
Արտաքին մակերեսը լվանում են խոզանակով կամ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով:	Մշակման ժամանակը ` 2 րոպե		
Ներքին խողովակները մեխանիկական եղանակով մաքրում են խոզանակի օգնությամբ և մետաղալարե մաքրիչներով	Մշակման ժամանակը ` 1,5 րոպե		
Ներքին խողովակները կրկնակի լվանում են միջոցի լուծույթով հատուկ հարմարանքներով			



ԵՐՐՈՐԴ ՓՈԽԼ

Խմելու ջրով արտադրատեսակի լվացում/ընկղմում, խոռոչների և խողովակների լվացում ներարկիչի կամ էլեկտրաարտածիչի օգնությամբ մինչ աշխատանքային լուծույթի լրիվ վերացումը, 3 րոպեի ընթացքում:



ՉՈՐՐՈՐԴ ՓՈԽԼ⁴

Պարզաջրում թորած ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով), մինչև խմելու ջրի մնացորդները վերանան:

Նշում.¹ Կիրառվում է կոշտ էնդոսկոպների և ճկուն էնդոսկոպների այն մասերի համար, որի համար թույլատրվում է ՈՒՁ մշակումը

2 Նախնական մաքրման և նախամանրէազերծման համար կիրառվում է 0,25 % լուծույթ:

3 Երկրորդ փուլը կիրառվում է էնդոսկոպային սարքավորումների ձեռքային եղանակով մշակման համար:

4 Չորրորդ փուլը կիրառվում է միայն նախամանրէազերծման փուլից հետո:

84. Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների ախտահանում, համակցված նախամանրէազերծման/ եզրափակիչ մաքրման հետ: Մշակման մեթոդաբանություն՝ էնդոսկոպների և դրանց կից գործիքների մշակումն իրականացվում է առանձին: Էնդոսկոպը և դրա կից գործիքներն ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ, ապահովելով ամբողջական շփում արտադրատեսակների մակերեսների հետ, և հարկադրաբար լցնում են ներքին խողովակները: Խողովակներից օդի հեռացման համար օգտագործում են ներարկիչ (պոմպ): Պահում են ազդեցության անհրաժեշտ ժամանակը և սկսում մաքրումը: Էնդոսկոպի և նրա գործիքների արտաքին մակերեսները մաքրում են լուծույթի մակերեսի վրա գործվածքային (թանգիվե) անձեռոցիկներով, թույլ չտալով ցայտում: Գործիքների և էնդոսկոպի պարագաների մաքրումը նույնպես իրականացնում են խոզանակներով: Էնդոսկոպների և նրանց կից գործիքների ներքին խողովակների և հանվող մասերի մեխանիկական մաքրումը իրականացնում են խոզանակներով և համապատասխան չափի մետաղալարե մաքրիչներով: Իրականացնում են էնդոսկոպների և գործիքների ներքին խողովակների կրկնակի լվացում լվացող-ախտահանող միջոցի լուծույթով հատուկ հարմարանքներով (սրսկող փողեր, լվացող

ներարկիչներ, պոմպ կամ լվացող ատրճանակ համապատասխան գլխադիրներով): Մեխանիկական մաքրումից հետո էնդոսկոպը և նրա կից գործիքները տեղափոխում են խմելու ջրով տարաների մեջ և լվանում միջոցի մնացորդներից: Էնդոսկոպի և նրա գործիքների պարզաջրումը այդ թվում խողովակները մղման հատուկ հարմարանքներով, իրականացնում են հաջորդաբար. սկզբում հոսող խմելու ջրով, այնուհետև՝ թորած: Լվացումից հետո էնդոսկոպի և նրա գործիքների արտաքին մակերեսները չորացնում են փափուկ գործվածքով, խողովակների մեջ օդ են փչում օդային ատրճանակներով: Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախամանրէազերծման/ եզրափակիչ մաքրման հետ համակցված ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի սխեմա 6-ում:

Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախամանրէազերծման/
եզրափակիչ մաքրման հետ համակցված ախտահանում
Ջեռքային (սխեմա 6) և մեքենայացված (սխեմա 7) եղանակներ

Սխեմա 6

Ջեռքային եղանակ



ԱՌԱՋԻՆ ՓՈԽԼ
Ախտահանում

Էնդոսկոպների (կամ ամբողջությամբ չընկղմվող էնդոսկոպների համար դրանց ընկղմման թույլատրվող մասերի), գործիքների և դրանց կից պարագաների թրջում՝ միջոցի աշխատանքային լուծույթի մեջ դրանք ամբողջությամբ ընկղմելով և խոռոչներն ու խողովակները լուծույթով լցնելով

Կոշտ և ճկուն էնդոսկոպներ				Էնդոսկոպներին կից գործիքներ			
Աշխատանքային լուծույթի խտությունը ըստ	Մանրէային բացի (տուբերկուլոզից), վիրուսային,	Սնկային (դերմատոֆիտիաներ)	Տուբերկուլոզ	Աշխատանքային լուծույթի խտությունը ըստ	Մանրէային բացի (տուբերկուլոզից), վիրուսային, սնկային	Սնկային (դերմատոֆիտիաներ)	Տուբերկուլոզ

նյութի (%)	սնկային (կանդիդոզներ)			նյութի (%)	(կանդիդոզներ)		
	Ազդեցության պահաժամը (րոպե)				Ազդեցության պահաժամը (րոպե)		
0,5	60	-	-	0,5	90	-	-
1,0	30	60	-	1,0	60	-	-
2,0	15	30	-	2,0	30	60	-
3,0	-	-	-	3,0	-	30	-
5,0	-	-	60	7,0	-	-	60
6,0	-	-	30	8,0	-	-	30

Նշում. ¹ Աշխատանքային լուծույթի խտությունն ու ազդեցության ժամանակը, որը կիրառվում է տուբերկուլոզի ժամանակ: Թեստավորված է *Mycobacterium terrae*-ի վրա:



ԵՐԿՐՈՐԴ ՓՈԽԼ

Բժշկական արտադրատեսակի նախամանրէագերծում

Յուրաքանչյուր արտադրատեսակի լվացում նույն լուծույթի մեջ, որտեղ իրականացվել է թրջումը, լուծույթի առնվազն 18°C ջերմաստիճանում

Ճկուն էնդոսկոպի բաժիններ	Մշակման ժամանակը, րոպե	Կոշտ էնդոսկոպի բաժիններ	Մշակման ժամանակը, րոպե
Գործիքային խողովակը մաքրում են գործիքային խողովակի մաքրման խողանակով	2	Յուրաքանչյուր դետալ լվանում են խողանակով կամ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով	2
Ներքին խողովակները լվանում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով	3	Խողովակները լվանում են ներարկիչով	2

Արտաքին մակերեսը լվանում են գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով	1		
Էնդոսկոպներին կից գործիքների մակերեսներ			
Արտաքին մակերեսը լվանում են խոզանակով կամ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով	Մշակման ժամանակը՝ 2 րոպե		
Ներքին խողովակները մեխանիկորեն մաքրում են խոզանակներով և մետաղալարային մաքրիչներով	Մշակման ժամանակը՝ 1,5 րոպե		
Ներքին խողովակները միջոցի լուծույթով կրկնակի լվանում են հատուկ հարմարանքներով			



ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Խմելու ջրով արտադրատեսակի լվացում/լնկումում, խոռոչների և խողովակների
լվացում ներարկիչի կամ էլեկտրաարտածիչի օգնությամբ մինչ աշխատանքային
լուծույթի լրիվ վերացումը, 3 րոպեի ընթացքում:



ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Պարզաջրում թորած ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ
էլեկտրաարտածիչով), մինչև խմելու ջրի մնացորդները վերանան:

Սխեմա 7

Մեքենայացված (ՌԻՁ)^{1,2,3} եղանակ



ԱՌԱՋԻՆ ՓՈԻԼ

Ուլտրաձայնային մշակում

Էնդոսկոպների, գործիքների և դրանց կից պարագաների մշակում ուլտրաձայնային սարքերում (ՈՒՁՍ) մշակում՝ դրանք ամբողջությամբ աշխատանքային լուծույթի մեջ ընկղմելով և լցնելով խոռոչներն ու խողովակները: Ուլտրաձայնային մշակումն իրականացվում է սարքի կիրառման հրահանգներին համապատասխան:

Կոշտ և ճկուն էնդոսկոպներ				Էնդոսկոպներին կից գործիքներ			
Աշխատանքային լուծույթի խտությունը ըստ նյութի, (%)	Մանրէային բացի (տուբերկուլոզի ց), վիրուսային, սնկային (կանդիդոզներ)	Սնկային (դերմատոֆիտ խաներ)	Տուբերկուլոզ ¹	Աշխատանքային լուծույթի խտությունը ըստ նյութի, (%)	Մանրէային բացի (տուբերկուլոզի ց), վիրուսային, սնկային (կանդիդոզներ)	Սնկային (դերմատոֆիտիաներ)	Տուբերկուլոզ ¹
	Ազդեցության պահաժամը (րոպե)				Ազդեցության պահաժամը (րոպե)		
1,0	30	60	-	1,0	60	-	-
2,0	15	30	-	2,0	30	60	-
6,0	-	-	30	8,0	-	-	30

Նշում 1-ՈՒՁ մշակման ենթարկվում են միայն այն իրերը, որոնք արտադրողի կողմից թույլատրված են ենթարկվելու ախտահանման տվյալ եղանակով

2 – ՈՒՁ-ավազանի հաճախականությունը 35 ± 2 կՀՑ մինչև 45 ± 2 կՀց միջակայքում

3-Կիրառվում է ցանկացած ջերմաստիճան $18-22^\circ\text{C}$; $35-40^\circ\text{C}$ միջակայքում;

4- Միջոցի աշխատանքային լուծույթի խտությունը և պահաժամերը կիրառելի են տուբերկուլոզի վարակի դեպքում: Թեսթավորված է *Mycobacterium terrae* վրա:



ԵՐԿՐՈՐԴ ՓՈԻԼ

Խմելու ջրով պարզաջրում՝ սարքի հրահանգին համապատասխան կամ սարքից դուրս (խոռոչների և խողովակների լվացում ներարկիչի կամ էլեկտրաարտածծիչի օգնությամբ), գործիքները՝ առնվազն 3 րոպե, էնդոսկոպը՝ առնվազն՝ 5 րոպե:



ԵՐՐՈՐԴ ՓՈԽԼ

Արտադրատեսակների պարզաջրում թորած ջրով (խողովակները մանրակրկիտ լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով), մինչև խմելու ջրի մնացորդները վերանան:

12. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

85. Միջոցով աշխատել չի թույլատրվում 18 տարեկանից ցածր, ալերգիկ հիվանդություններ ունեցող անձանց, հղի կանանց և կերակրող մայրերին:

86. Միջոցով աշխատում են՝ օգտագործելով հետևյալ անհատական պաշտպանության միջոցները (ԱՊՄ).

1) Մաշկի պաշտպանության միջոցներ՝

ա. պաշտպանիչ խալաթ կամ համազգեստ, քիմիապես կայուն ձեռնոցներ կաուչուկից, լատեքսից, պոլիվինիլքլորիդից և այլն, որոնք ապահովում են համապատասխան պաշտպանություն հիմնային լվացող նյութերից, ինչպես նաև ախտածին մանրէներից, բ. ոտքերի պաշտպանության միջոցներ (մեկանգամյա կիրառության միջոցներ կամ ռետինե ճոքակոշիկներ):

2) Աչքերի պաշտպանության միջոցներ՝

ա. ակնոց կամ դիմակ, որոնք ապահովում են պաշտպանություն քիմիական ախտահանիչների ցայտումից, ինչպես նաև ախտածին մանրէներ պարունակող հեղուկների ցայտումից,

բ. վահանակներ, էկրաններ:

3) Շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ՝

ա. քիմիական ախտահանիչների գոլորշիներից, ինչպես նաև ախտածին մանրէներից (օդակաթիլային ճանապարհով փոխանցվող օրգանիզմների առաջացման հնարավորության դեպքում) պաշտպանություն ապահովող դիմակներ,

բ. «Բ» մակնիշի պատրոնով ՔՊԴ-67 կամ ՔՄ-60Մ տեսակի ունիվերսալ շնչադիմակներ:

87. Շփման, ընկղմման և թրջման եղանակով, այսինքն, արյան և կենսաբանական հեղուկների փոքր քանակների թափման դեպքում օբյեկտների ախտահանումն իրականացվում է մարդկանց ներկայությամբ, առանց շնչառական օրգանների պաշտպանության միջոցների: Ախտահանում իրականացնող անձնակազմի համար պարտադիր է մաշկի անհատական պաշտպանության միջոցների (պաշտպանիչ խալաթ, ձեռնոց) օգտագործումը:

88. Կենսաբանական հեղուկներով թափվածք պարունակող մակերեսներն ախտահանում են անհատական պաշտպանության միջոցների ամբողջ լրակազմ կիրառելով:

89. Ոռոգման եղանակով մշակման ժամանակ անձնակազմն օգտագործում է մաշկի (պաշտպանիչ խալաթ կամ համազգեստ, ձեռնոց), շնչառական օրգանների («Բ» մակնիշի պատրոնով ՔՊԴ-67 կամ ՔՄ-60Մ տեսակի ունիվերսալ շնչադիմակներ, դիմակներ), աչքերի (հերմետիկ պաշտպանիչ ակնոց, վահանակներ, էկրաններ), ոտքերի (մեկանգամյա օգտագործման միջոցներ, ռետինե ճոքակոշիկներ) անհատական պաշտպանության միջոցներ:

90. Ոռոգման եղանակով մշակումն իրականացվում է պացիենտների բացակայությամբ և մաշկի, շնչական օրգանների և աչքերի անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ:

91. Միջոցի լուծույթներով տարաները բժշկական արտադրատեսակների ախտահանման ժամանակ ամուր փակվում են կափարիչով:

92. Միջոցը չեն խառնում այլ ախտահանիչների հետ:

93. Միջոցով աշխատանքներն ավարտելուց հետո ձեռքերն ու դեմքը լվանում են օճառով: Ոռոգման եղանակով մշակումից հետո սենքը օդափոխվում է:

13. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՊԱՏԱՀԱԿԱՆ

ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

94. Միջոցը քիչ վտանգավոր է, սակայն ոռոգման եղանակով աշխատանքի ժամանակ նախազգուշական միջոցառումները չպահպանելու դեպքում հնարավոր է առաջանան վերին շնչառական օրգանների (չորություն, հազ, կոկորդում քերծվածության զգացում), աչքերի (արցունքահոսություն, ծակծկոց) և մաշկային ծածկույթների (հիպերեմիա, այտուցվածություն) գրգռում:

95. Միջոցի աշխատանքային լուծույթի (փոշու) աչքերի մեջ լցվելիս աչքերն անմիջապես լվանում են ջրի շիթով 10-15 րոպե կամ 2 % սոդայի լուծույթով, հետո կաթեցնում նատրիումի սուլֆացիլի 30 %-ոց լուծույթ: Կոնտակտային լինզաներ կրողները մշակումից 5 րոպե առաջ հանում են, այնուհետև լվանում աչքերը: Անհրաժեշտության դեպքում դիմում են բժշկի:

96. Միջոցի աշխատանքային լուծույթի (փոշու) մաշկի վրա պատահական լցվելու դեպքում անհապաղ լվանում են մեծ քանակությամբ ջրով 10-15 րոպե:

97. Շնչառական օրգանների գրգռման ժամանակ դադարեցնում են աշխատանքը միջոցով, տուժածին հանում մաքուր օդի, բերանը ողողում են ջրով, այնուհետև նշանակում նատրիումի հիդրոկարբոնատի 2%-ոց լուծույթով տաք, խոնավ ինհալյացիաներ կամ ողողումներ: Քթային շնչառության խանգարման դեպքում օգտագործում են էֆեդրինի 2%-ոց լուծույթ, կոկորդի ախտահարման դեպքում՝ լուծույթանոցում, սոդայով տաք կաթ կամ հանքային ջուր: Անհրաժեշտության դեպքում դիմում են բժշկի:

98. Միջոցը ստամոքսի մեջ հայտնվելու ժամանակ խմում են մի քանի բաժակ ջուր և անհապաղ դիմում բժշկի: Փսխում առաջացնել և ստամոքսի լվացում անել խորհուրդ չի տրվում:

14. ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ, ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, ՊԱՀՈՒՄ

99. Միջոցը տեղափոխվում է վերգետնյա տրանսպորտի բոլոր տեսակներով արտադրողի փաթեթավորմամբ՝ տրանսպորտի տվյալ տեսակի համար գործող և միջոցի ու տարայի անվնասությունը երաշխավորող բեռների տեղափոխման կանոններին համապատասխան:

100. Միջոցը պահում են արտադրողի չբացված փաթեթավորմամբ -20°C -ից մինչև $+30^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում, խոնավությունից և արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, ջերմության աղբյուրներից, դյուրավառ հեղուկներից հեռու տեղում, դեղամիջոցներից առանձին, կենդանիներին և օտար մարդկանց անհասանելի տեղում:

101. Միջոցը թողարկվում է կափարիչով ամուր փակվող 1 մլ-ից 50 մլ սաշերում, 200, 500, 1000 սմ³ պոլիմերային ֆլակոններում, 5, 10, 20, 40 դմ³ ծավալով ամուր փակվող կանիստրներում, 50, 100, 200 դմ³ տարողությամբ պոլիմերային տակառներում:

15. ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

102. Ըստ որակի ցուցանիշների, միջոցը հսկվում է սույն հրահանգի աղյուսակ 16-ում ներկայացված ցուցանիշներին և նորմաներին համապատասխան:

Աղյուսակ 16.

Միջոցի որակի ցուցանիշներ

	Ցուցանիշի անվանում	Նորմա
1	Արտաքին տեսք, գույն, հոտ	Անգույնից մինչև դեղին գույնի թափանցիկ հեղուկ, օժանելիքի հոտով:
2	Խտությունը 20°C ջերմաստիճանում, գ/սմ ³	$1,00 \pm 0,05$
3	Միջոցի ջրային լուծույթի ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշը (pH)	$8,0 \pm 1,0$
4	ՉԱՄ-ի զանգվածային բաժինը (N,N-դիօկտիլդիմեթիլամոնիումի քլորիդ, N,N-դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ, ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ), գումարային, %	$12,0 \pm 1,0$

103. Արտաքին տեսքը և գույնը որոշվում է ակնադիտորեն, հոտը որոշում են օրգանոլեպտիկ եղանակով: 30-32 մմ տրամագծով անգույն ապակուց փորձանոթի մեջ

մինչև կեսը լցնում են միջոցի լուծույթ և դիտում են արտացոլված կամ անցողիկ լույսի տակ:

104. Խտությունը 20°C ջերմաստիճանում չափվում է ԳՕՍՏ 18995.1-ին համապատասխան:

105. Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշի, միջոցի pH-ի որոշում՝

1) Սարքավորումներ, նյութեր, ռեակտիվներ՝ ցանկացած մակնիշի pH-մետր՝ 0.1 չգերազանցող սխալանքով, 50 սմ^3 տարողությամբ ապակե բաժակ՝ ըստ ԳՕՍՏ 25336-82:

2) Փորձարկման իրականացում՝ բաժակի մեջ լցնում են 30-40 սմ^3 ծավալով միջոց և pH-մետրով չափում են pH՝ համաձայն հրահանգի:

106. ՉԱՄ (N,N-դիօկտիլդիմեթիլամոնիումի քլորիդ, դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ, ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ) գումարային զանգվածային բաժնի որոշում:

1. Սարքավորումներ, ռեակտիվներ, նյութեր՝

1) ընդհանուր նշանակության 2-րդ դասի լաբորատոր կշեռք ըստ ԳՕՍՏ 53228-2008՝ 200 գ կշռման առավելագույն սահմանով,

2) բյուրեղ 1-3-2-25-0,1,

3) կոլբա Кн 1-250-29/32 ТХС տիպի՝ ըստ ԳՕՍՏ 25336՝ հղկված խցանով,

4) Ծծմբական թթու ըստ ԳՕՍՏ 4204,

5) Քլորոֆորմ ըստ ԳՕՍՏ 20015,

6) Նատրիումի դոդեցիլսուլֆատ ըստ ТУ 6-09-64, 0,004Ն ջրային լուծույթ,

7) Նատրիումի սուլֆատ տասջրանոց, մ.հ.հ. ըստ ԳՕՍՏ 4171,

8) Մեթիլեն երկնագույն ըստ ՏՈՒ 6-09-29,

9) ցետիլպիրիդինիումի քլորիդ 1-ջրային՝ հիմնական նյութի 99% ոչ պակաս պարունակությամբ «Մերկ» (Գերմանիա) ընկերության արտադրության կամ նմանատիպ որակի ռեակտիվ ըստ գործող նորմատիվային փաստաթղթերի, 0,004 Ն ջրային լուծույթ,

10) թորած ջուր ըստ ԳՕՍՏ 6709:

2. Հետազոտության նախապատրաստում՝ ինդիկատորի, ցետիլպիրիդինիումի քլորիդի և նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթների պատրաստում.

1) ինդիկատորի լուծույթի պատրաստման համար 1 դմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ լցնում են 30 սմ³ մեթիլենային կապույտի 0,1% ջրային լուծույթ, 7,0 սմ³ խտացրած ծծմբական թթու, 110 գ նատրիումի սուլֆատ տասջրանոց և ծավալը թորած ջրով հասցնում են մինչև 1 դմ³:

2) ցետիլպիրիդինիումի քլորիդի 0,004Ն լուծույթը պատրաստում են 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ թորած ջրում մինչև 0,0002 գ ճշգրտությամբ վերցված ցետիլպիրիդինիումի քլորիդ 1-ջրային 0,143 գ կշռուկի լուծմամբ և ջրի ծավալը հասցնելով մինչև նիշ,

3) նատրիումի դոդեցիլսուլֆատի 0,004Ն լուծույթը պատրաստում են 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ թորած ջրում նատրիումի դոդեցիլսուլֆատի 0,116 գ կշռուկի լուծմամբ և ջրի ծավալը հասցնելով մինչև նիշ:

107. Նատրիումի դոդեցիլսուլֆատի 0,004Ն լուծույթի շտկիչ գործակցի որոշում: 250 սմ³ տարողությամբ փորձանոթի մեջ 10 սմ³ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթին ավելացնում են 40 սմ³ թորած ջուր, 20 սմ³ ինդիկատորի լուծույթ և 15 սմ³ քլորոֆորմ: Առաջացած երկֆազ համակարգը տիտրում են ցետիլպիրիդինիումի քլորիդի լուծույթով՝ փակ կափարիչով կոլբայի ինտենսիվ թափահարմամբ, մինչև ներքևի քլորոֆորմային շերտի գունազրկումը: Տիտրումն իրականացնում են ցերեկային լուսավորության ներքո: Երկֆազ համակարգի գույնը որոշում են անցողիկ լույսի տակ:

108. Հետազոտության իրականացում՝ 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ մինչև 0,0002 գ ճշգրտությամբ վերցված հետազոտվող նմուշի 0,5-ից մինչև 0,7 գ կշռուկը լուծում են թորած ջրում՝ ջրի ծավալը հասցնելով մինչև նիշ: 250 սմ³ տարողությամբ կոնաձև կոլբայի մեջ լցնում են 5 սմ³ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթ, ավելացնում են 45 սմ³ թորած ջուր, 20 սմ³ ինդիկատորի լուծույթ և 15 սմ³ քլորոֆորմ: Թափահարման արդյունքում առաջանում է երկֆազ համակարգ՝ կապույտ գույն ներկված ներքևի քլորոֆորմային շերտով: Այն տիտրում են միջոցի պատրաստի լուծույթով՝ փակ կափարիչով կոլբան ինտենսիվ թափահարելով, մինչև ներքևի

քլորոֆորմային շերտի գունազրկումը: Տիտրումն իրականացնում են ցերեկային լուսավորության ներքո: Երկֆազ համակարգի գույնը որոշում են անցողիկ լույսի տակ:

109. Արդյունքների մշակում: ՉԱՄ զանգվածային բաժինը (X) տոկոսներով որոշում են հետևյալ բանաձևով.

$$X = \frac{0.00138 \times V \times K \times 100}{V_1 \cdot m} \cdot 100, \text{ որտեղ}$$

0.00138 – N,N-դիսոկտիլդիմեթիլամոնիումի քլորիդի, դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդի, ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդի) միջին զանգվածն է (ՉԱՄ գումարային), որը համապատասխանում է ուղիղ $C(C_{12}H_{25}SO_4Na) = 0.004$ մոլ/դմ³ (0.004Ն) նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի 1 սմ³ -ին, գ,

V – $C(C_{12}H_{25}SO_4Na) = 0.004$ մոլ/դմ³ (0.004Ն) խտությամբ նատրիումի դոդեցիլսուլֆատի տիտրվող լուծույթի ծավալ, 5 սմ³,

K – $C(C_{12}H_{25}SO_4Na) = 0.004$ մոլ/դմ³ (0.004Ն) խտությամբ նատրիումի դոդեցիլսուլֆատի տիտրվող լուծույթի շտկիչ գործակից,

100 – հետազոտվող նմուշի նոսրացման գործակից,

V₁ – միջոցի լուծույթի ծավալ, որը ծախսվել է տիտրման ժամանակ, սմ³,

m – հետազոտվող նմուշի զանգված, գ:

110. Որպես հետազոտության արդյունք ընդունում են երեք որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունները չեն գերազանցում թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 0.3%: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 4.0\%$ ՝ P=0.95 հավանականության վստահելի միջակայքում:

Աղյուսակ 17.

Միջոցի աշխատանքային լուծույթների pH-ը

Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	pH
0,2	7,7±0,5
0,25	7,7±0,5
0,5	7,7±0,5
1,0	7,7±0,5
1,5	7,7±0,5
2,0	7,7±0,5
3,0	7,6±0,5
4,0	7,6±0,5
5,0	7,6±0,5
6,0	7,5±0,5
7,0	7,5±0,5
8,0	7,5±0,5
10,0	7,5±0,5